

# ՄԱՆԿԱԿԱՐԺԱՆՈՅ

ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

1884. ՄԱՅԻՍ

№ 3

ԱՌԱՋԻՆ ՏԵՐԻ

## ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Երէւ.
1. Ինքնակրթութիւն գրքերով.....	129
2. Կրօնի պրօգրամի առիթով.....	134
3. Յ. Երկրի աշխարհագրութեան դասեր....	147
4. Ֆրանսիայի դպրոցական տարեկան ծախս.	158
5. Համէրտի դատակներ (բանաստ.).....	162
6. Եվրոպացիների գաղութացումներով.....	163
7. Յիշատակարան.....	178
8. Խմբագրութեան պատասխաններ.	
9. Մանուցմունք կազմի 2, 3 և 4 երևաններով:	

ԹԻՖԼԻՍ

ՅՈՎ. ՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ ՏՊԱՐԱՆ

1884

# ԾԱՆՈՒՅՄ ՈՒՆՔ

## „ՎԱՐՓԱՐԱՆ“

### ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

Հրատարակվում է ամիսը մե անգամ, բացի յու-  
նիս և յուլիս ամիսներից:

Մեկ տարեկան բաժանորդագրին 5 մա-

595



դրատոսին և վերջանում է  
ըով 10 տետրակ:

Վեւ կարելի է խմբագրա-  
ցիները գրեմում են հետե-  
ւոյ, въ редакцію журнала

տարաւիչ Ն. ԽՈՍՐՈՎԱՆ:

## ԲԻՒՐ“

### ԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ

Հրատարակվում է յոյն գերբով, ուղղութիւնով  
և միւսնոյն աշխատակիցները աշխատութիւնով:

Տարեկան բաժանորդները իր ստանան երկու ձրի պրե-  
միա՝ յուլիսին և գեկտեմբերին:

Աղբիւրի տարեկան բաժանորդագրին 3 ռ. է,  
կէս տարուանը 2 ռ.

Հասցէն. Тифлисъ. Редація „Агбюръ“.

Խմբագիր-Հրատարակիչ Ն. ՆԱԶԱՐԵԱՆ:



# ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԱԿԻՐ

Իւրաքանչիւր տետրը 2

Հասցէն. ՏՎ. ԵՄԻԱԺՅԻՆԻ.

Թերթ: Տարին 10 տետր:

Редакция МАНКАВАРЖА-

Տարեկան գինը 3 ման.

НОЦЬ.

1884. ՄԱՅԻՍ

№ 3

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Faisons notre devoir, le reste est vanité. (Մենք մեր պարտքը կատարենք,  
մնացածն ունայնութիւն է:)

## ԻՆՔՆԱԿԻՐԹՈՒԹԻՒՆ ԳՐԲԵՐՈՎ:

Ընկերութիւնը մեզ նոյնպէս կարեւոր է, ինչպէս  
օդը և սնունդը: Կատարեալ առանձնութեան դա-  
տադարձում մասնով, մեծանալով առանց տե-  
նելու կամ լսելու մարդկային արարածներին, հա-  
ւասար չէր լինի հասկացողութեան կողմից՝ քանի  
մի յայտնի անասուններին անգամ: Իրանից առա-  
ւել մեծ խելք ունեցող անձների հետ երբէք հա-  
ղորդակցութիւն չունեցող մարդը երեւի միևնոյն  
միօրինակ ձանձրալի մտքի և գործողութեան շը-  
ջանակ կ'ունենար մինչև իւր կեանքի վերջը:

Առաւելապէս գրքերով է, որ ձեռք ենք բերում  
բարձրագոյն մտքերի և խելքերի հետ հաղորդակ-  
ցութիւնը և հաղորդակցութեան այս անգին մի-  
ջոցը ամենքին հասանելի է: Ամենազեղչեցիկ գրք-

քերում մեծամեծ մարդիկ խօսումեն մեզ հետ, տալիս են մեզ իրանց ամենաթանկագին մտքերը և իրանց հոգին թափումեն մեր հոգու մէջ, Գոհանանք գրքերի Աստուծուց: Գրքերը ձայն են նոցա, որոնք հեռու են, և նոցա, որոնք մեռած են. նոքա մեզ անցած գնացած դարերի մտաւորական կեանքի ժառանգորդներ են անում: (Իէկարտը իւր եղանակի ճառում ասումէ. լաւ գրքերի ընթերցանութիւնը նոյն է թէ խօսակցութիւն անցած դարերի ամենագնիւ մարդիկների հետ, որոնք նոցա հեղինակներ էին, այն ևս խորհած կշռւած խօսակցութիւն, որի մէջ նոքա մեզ յայտնումեն իրանց մտքերից միմիայն ամենալաւերը): Գրքերը ճշմարիտ հարթակշիռներ են:

Որոնք կամենումեն նոցա անկեղծօրէն գործածել, նոքա այնպիսիներին հասցնումեն լաւագոյն և ամենամեծ մարդիկներին ընկերութիւն և մտաւոր ներկայութիւն: Ի՞նչ փոյթ, որ ես աղքատ եմ: Ի՞նչ փոյթ, որ դարիս բաղդաւորները անարժան են համարում իմ մութ բնակարան մտնել, եթէ սուրբ գիրքը մտնումէ և օթեմանումէ իմ ծածկի տակ, եթէ Միլտոնը անցնումէ իմ շէմքով դրախտը օրհներգելու համար, Շէկսպիրը—երևակայութեան աշխարհներ և մարդկային սրտի գաղտնիքներ բանալու համար, Ֆրանկլինը—իւր գործնական իմաստութեամբ ինձ հարստացնելու համար, ինձանից պակաս չեն լինի մտաւոր բարեկամներ, և ես կկարօղանամ բարեկիւրթ մարդ դառնալ, երբ մինչև անգամ ընդունված չեմ լինի



լաւ հասարակութիւն կուլած անձներ յօտ իմ  
բնակած քաղաքում:

Ջարդացման այս միջոցը ազդու և գորեղ շէնե-  
լու համար պէտքէ լաւ գրքերի ընտրութիւն ա-  
նել, այնպիսի գրքերի, որոնք գրված են իրաւացի  
և հաստատամիտ խելքերի, ճշմարիտ մտածողնե-  
րի ձեռով, որոնք, փոխանակ կրկնութիւններով  
ուրիշների մտքերը հեղեղելու, ինքնին մի բան ու-  
նին ասելու և լրջմիտ մարդիկները համար են  
գրում: Այս երկասիրութիւնները պէտք չէ հարե-  
ւանցի անցնել զուարճութեան համար, այլ հար-  
կաւոր է նոցա կարգաւ հաստատուն ուշադրու-  
թեամբ և յարգելի սէրով գէպի ճշմարտութիւնը:  
Մեր ընթերցանութեան գրքերի ընտրութեան վե-  
րաբերմամբ մենք կարող ենք շահվել այն անձ-  
ներից, որոնք մեզանից աւելի կարգացած են և  
զարգացած: Բայց, ի վերջոյ, առաւել լաւ կլինի,  
որ մենք ընթերցանութիւնը որոշենք մեր սեփա-  
կան ճաշակով: Լաւագոյն գրքեր մեզ համար միշտ  
այն գրքերը չեն, որ առաջարկումէ մեզ խելացի  
մարդը, այլ առաւելապէս նոքա են, որոնք համա-  
պատասխանում են մեր մասնաւոր կարիքներին,  
մեր խելքի բնական ծարաւին և որոնք հետևա-  
պէս զարթեցնում են մեր հարցասիրութիւնը և  
հաստատում են մեր միտքը:

Հարկաւոր է նկատել, որ ոչ միայն գրքերի վե-  
րաբերմամբ, այլ ուրիշ պատճառներով ևս, կրթու-  
թիւնը պիտի փոխվի ամեն մի անհատի նկատ-  
մամբ: Ամենայն միջոցներ հաւասարապէս ամեն-  
քին չեն յարմարում: Մարդը պիտի գարգանայ ա-

զատօրէն և խնամէ այն առանձին շնորհներ կամ  
հակամխտութիւններ, որով բնութիւնը որոշած է  
նորան ուրիշ մարդիկներէց: Կրթութիւնը անհա-  
տաղանութեան զոհաբերութիւն չէ պահանջում:  
Կրթութիւնը մեքենայի պէս պիտի չտանջէ իւրա-  
քանչիւր մարդէն անփոփոխելի կաղապարի մէջ  
գետեղելու համար նորան: Ինչպէս որ մարդկային  
երեօր, թէև միշտ միևնոյն գծերէց բաղկացած,  
անսահման տարբերութիւն է ներկայացնում, և  
երբէք միևնոյն չէ երկու անհատների մէջ, նոյն-  
պէս և մարդկային հոգին միևնոյն ընդունակու-  
թիւններով, և միևնոյն օրէնքների իշխանութեան  
ներքոյ, անսահման տարբեր ձևերով է զարգա-  
նում, և ողբալի կերպով ճնշված կլինէր այն կրթ-  
ութեամբ, որը ստիպէր ամեն մարդիկներին մի-  
ևնոյն դաս սովորելու և միևնոյն կանոններին  
խոնարհելու:

Գիտեմ թէ որքան դժուար է ոմանց համար,  
մանաւանդ նոցա, որոնք ընկղմած են ձեռագործ  
աշխատութիւնների մէջ, իրանց ուղադրութիւնը  
մի գրքի վերա ամփոփել: Թող նոքա ճիգ թա-  
փեն արգելքներին յաղթելու, ընտրելով իրանց  
զգայուն կերպով հետաքրքրող առարկաներ, կամ  
կարգաւորվ այն անձների ընկերութեան մէջ, որոնց  
սիրումեն: Ոչինչ չէ կարօղ գրքերը փոխարինել:  
Գրքերը այն բարեկամներ են, որոնք քաջալերու-  
մեն մեզ, մխթարումեն մեզ միայնութեան,  
հիւանդութեան, տրտմութեան մէջ: Երկու ցամաք-  
ների հարստութիւնն ևս չէր կարօղանայ նոցա  
տուած բարիքը փոխարինել: Թող իւրաքանչիւրը,



եթէ հնաբաւոր է, ժողովէ իւր յարկէ տակ քանի մի լաւ երկասիրութիւններ և կոեսնէ թէ կեանքը ինչ կգառնայ նորա համար: Ամենայն շնայութիւն գոհելու է քանի մի կարևոր գրքեր ձեռք բերելու համար:

Մեր ժամանակի ամենահետաքրքիր յատկութիւններից մին գրքերի բաղմանալն է և նոցա տարածումն հասարակութեան ամեն դասակարգերում: Այժմ կարելի է ձեռք բերել քիչ փողով գրականութեան ամենաթանկագին գանձերը: Այն գրքերը, որոնք առաջ նոցա սուղ գնի պատճառով սակաւաթիւներէ ձեռին էին լինում, այսօր ամենքին հասանելի են: Եւ այս կողմից հասարակութեան մէջ սովորութիւնների մի այնպիսի փոփոխութիւն է կատարւում, որը շատ ձեռնտու է ժողովրդի կրթութեանը: Իւր տեղեկութիւնների և իւր դատողութիւնների վերաբերմամբ, ժողովուրդն այլևս կախում չունի այն աղաղակներից, որ հասցնումէր նորան դէպքը օրական ունայն խօսակցութիւններից: Փոխանակ իրանց կարծիքները ամբողջ մէջ կազմելու և առաւելագէտ իրանց դրացիների ձայնին գիշանելու, մարդիկ ինքնին սկսումեն ուսումնասիրել և դատել, հետամուտ լինել գործին հաստատուն կերպով, ինքնին ընտրել ինչ որ պիտի գրադեցնէ նոցա խելքը և իրանց օգնութեան կանչել ամեն երկիրների և ամեն դարերի մատենագիրների գիտութիւնը, նորանոր հայեացքները և դատողութիւնները: Սորանից առաջ կգան հասունութիւն, կարծիքների անկախութիւն, և տեղեկութիւնների այն խորութիւն և ընդարձա-

կութիւն, որոնք անյայտ էին առաջ։ Այս լռե-  
լեայն ուսուցիչները, որոնց գրքեր են ասում, ընդ-  
հանուր տարածումն ամբողջ հասարակութեան  
մէջ առաւել մեծամեծ հետեւանքներ կառաջացնէ  
քան թէ թնդանութները, մեքենաները և օրէնք-  
ները։ Նոցա խաղաղ ներգործութիւնը կ'իոխարինէ  
ամենայն լեղափոխական փոթորիկները։ Այս կեր-  
պով ընդհանրացած կրթութիւնը անձառելի բա-  
րեք լինելով անհատները համար, միւլնոյն ժա-  
մանակ խաղաղութիւն և հաստատութիւն կ'ուայ  
ազգերին։

ՉԱՆԻՆԳ։

#### ԿՐԾՆԻ ՊՐՕԳՐԱՄԻ ԱՌԻԹՈՎ։

Պրօգրամները գրքոյկում հրատարակած մեր  
կրօնի պրօգրամի մասին գանազան անձներէց կար-  
ծիքներ լսեցինք։ Մին գրումէ մեզ. «Ընդունեցէք  
իմ խորին շնորհակալութիւնը ձեր պրօգրամների  
գրքոյկի համար։ Այս ձեր աշխատութիւնը արդարեւ  
նշանաւոր գործ է. անկասկած մեր ուսումնարան-  
ները մեծ օգուտ են քաղելու։ Ի՛նչ պարզ և ճշ-  
մարիտ մտքեր էք յայտնած—Քանի մի նախազի-  
տելի խօսք կրօնի դասաւարտութեան համար յօ-  
ղուածով։ Անվիճելի է, որ մեր դպրոցներում ոչ  
աւանդումեն կրօն և ոչ դասատու ունինք... Մեր  
անբաղդութիւնն այն է, որ չենք կարողանում մեր  
երեսւանների ուսումն հիմնել կրօնի վերա։ Մի դա-  
դարեք այդ առարկայի վերա խօսել։»



Միւսն ևս գրումէ. «Խորին շնորհակալութիւն  
յայտնելով ձեր գրքոյկի համար, կցանկայինք, որ  
կրօնի պրօգրամը, որը մեր դպրոցներէ ամենաթոյլ  
կողմն է, առաւել բացատրէիք թէ ի՞նչ առանձին  
օգուտ ունի ձեր առաջարկած համակեդրօնական  
եղանակը, թէ հնարաւոր է արդեօք ձեր առա-  
ջարկած բոլոր տեղեկութիւնները աւանդել, և թէ  
ի՞նչ հիմամբ բաց են թողւած դանազան պատմու-  
թիւններ» և այլն:

Կաշխատենք հետզհետէ լցուցանել բարեսէր  
անձներէ այս փափագը, որ և մեր փափագ է:

Արօնագիտութիւնն առաջին գործ պիտի լինի և  
հարկէ քրիստոնէական դպրոցներում, ուստի և  
մանկավարժների հոգացողութեան առաջին առար-  
կայ:

Խոստովանելու է (եթէ ցանկանում ենք բարւո-  
քել մեր վտանգաւոր դրութիւնը), որ մեր մէջ  
կրօնը այսինքն մարդի հաղորդակցութիւնն Աս-  
տուծու հետ ընդհանրապէս թուլացած է ամեն  
տեղ թէ հասակաւորների և թէ դեռահասների  
մէջ: Հայկական եկեղեցիներում հասակաւորների  
համար չէ լսվում կենդանի հաւատով զօրեղ քա-  
րոզ, մեր դպրոցներում դեռահասների համար չէ  
աւանդվում կրօնը այն եղանակով, որ զարգանան  
կրօնական բարոյակիտն զգացմունք, և մանուկները  
ճանաչեն և սիրեն քրիստոնէական կրօնի ճշմար-  
տութիւնները:

Թէ երբեմնապէս լսելի քարոզը հայ եկեղեցում  
և թէ կրօնի դասատուութիւնը հայ դպրոցում  
գրեթէ ձեւի համար են լինում: Գոնէ հետեւանք-

ներն այդ են ցուցանում. ծառը պտղից կճանաչվի:

Ռուսազն կրօնագէտ Ա.Թ. Սակալովը շատ բազմակողմանի քննած ունի կրօնի խնդիրը դպրոցում „Методика Закона Божия“ գրքում: Յանկալի է, որ մեր կրօնուսույցները օգուտ քաղեն այս գրքից, ինչպէս և մենք օգուտ քաղեցինք: Գիրքն արժէ 1 մ. 50 կ.

Ամենից առաջ հարկաւոր է ի հարկէ պրօգրամ կրօնի դասատուութեան համար:

Հայ ծխական դպրոցները միատեսակ չեն թէ աշակերտները հասակով, թէ դպրոցում նոցա անցուցած ժամանակով, թէ մանաւանդ հայախօսութեամբ:

Արդ կարելի է արդե՞ք բոլոր դպրոցներում միևնոյն պրօգրամով ուսուցանել կրօնը: Թէև նոյնանման պրօգրամը բոլոր դպրոցների համար քանի մի առաւելութիւններ ունի, սակայն վերոյիշվածն ի նկատի ունենալով, բոլոր ծխական դպրոցներում անկարելի է կարծեմ նոյնանման պրօգրամ գործածել: Մինչև անգամ միևնոյն թեմում դժուար է միևնոյն պրօգրամը խիստ ճշտութեամբ գործադրել: Ինչ որ հեշտութեամբ կարօղ են սովորել մի տարվան ընթացքում Թիֆլիսի, Երևանի, Շուշու հայախօս աշակերտները, նոյնը չեն կարօղ սովորել Թէլավի, Գօրու և ուրիշ վրացախօս քաղաքների, կամ Աքքէրմանի, Օդէսայի, Քիշինէվի և ուրիշ թիւրքախօս կամ ռուսախօս քաղաքները աշակերտներն, որոնց համար հայկական հնչիւնը հազիւ մի տարվան ընթացքում ընտանի է դառ-



նում: Ուստի այսպիսի յարգելի պատճառներով  
կրօնուսույցները թեմական վերատեսչի հետ պիտի  
խորհրդակցեն յառաջագոյն թէ եր յօդուածներ  
(Թուով հարկաւ 8—10 պատմած) կարելի է բուն  
էական չհամարել և բաց թողնել ընդհանուր  
պրօգրամից:

Ուրիշ խնդիր է պրօգրամի ներքին կողմը: Այս-  
տեղ ցանկալի է անշուշտ որ կրօնուսույցները հա-  
մաձայն և համամիտ կերպով նայէին գործին,  
որովհետեւ կրօնի դասատուութիւնը նոյնպէս պիտի  
ենթարկվի յայտնի մանկավարժական սկզբուն-  
քին: Բայց մեր կրօնուսույցներն հեռու են գեռւս  
այս տեսակէտից:

ա) Շատերը կարծում են թէ սրբազան պատմու-  
թիւն անունով ծխական դպրոցում երրայական  
ազգի քաղաքական պատմութիւն պիտի ուսում-  
նասիրվի: Ուստի դասազրքերում երկար գլուխներ  
ենք գտնում դատաւորներն մասին, Իսրայէլի և  
Յուդայի Թագաւորութիւններն մասին, և այլն:

Այսպիսի տեղեկութիւններն ոչինչ յարաբերու-  
թիւն չունին տարրական կրօնագիտութեան նպա-  
տակի հետ: Քրիստոսի ծննդից 4—5 դար առաջ  
կատարված բոլոր իրողութիւնների փոխանակ բո-  
լորովին բաւական կլինէր հաղորդել մանուկներին  
միայն այն թէ Յիսուսի ծննդից առաջ հրէաներն  
իրանց Թագաւոր չունէին, և յիշեցնելու նոցա Յու-  
դային տուած Յակոբի մարգարէական օրհնու-  
թիւնը:

Կասեն. Ընչպէս կարելի է բաց թողնել կրօնի  
դասերից երրայական ժողովրդի քաղաքական

պատմութիւնը, մինչդեռ կրօնի ճշմարտութիւնները սերտ կապված են սոյն ազգի վիճակի հետ, ճշմարտութիւններն յայտնված են մարդկային ազգին հին կտակարանում միմիայն եբրայական ժողովրդի մէջ: Նւ թէ կարելի է օրինակ մեկնել թէ ինչպէս մարդկութիւնը զբաւոր օրէնք ստացաւ Սինայ սարի վերա, եթէ բաց թողնենք եբրայեցիներէ նոյն միջոցի քաղաքական կացութիւնը:— Եբրայեցիների քաղաքական պատմութիւնն այնքան է հարկաւոր աւանդել կրօնի դասերում, որ քան անհրաժեշտ կարեւոր է: Բայց կրօնի ո՞ր ճշմարտութիւններ, որոնք կարեւոր են մանուկներէ համար, սերտ կապված են դատաւորների պատմութեան հետ, Յուդայի և Իսրայէլի թագաւորութիւնների պատմութեան հետ և այլն: Գործի այս դրութեան միակ պատճառն այն է, որ մեր մէջ չէ որոշված թէ ինչ աւանդելու է ծխական դպրոցներում և ինչ—միջնակարգ դպրոցներում:

բ) Տարրական դպրոցի աշակերտներին այնպիսի պատմածներ են աւանդվում, որոնք ոչինչ բարոյական եզրակացութիւններ չունին և զուր ժամանակի կորուստ է լինում: Ի՞նչ ասենք օրինակ Իսահակի զաւակների օրհնութեան պատմութեան մասին:

Գուցէ առաջարկեն թէ մանուկը միայն դրական տպաւորութիւններով պիտի չկրթվի, թէ մանուկին միայն անձնութեան, ընկերսիրութեան, անկեղծութեան և այլն օրինակներ տրոյ տալով, նա այնպիսի վերացական կրթութիւն կստանայ, որ բոլոր մարդիկների մէջ միայն առա-



քննութիւններ կտեսնէ, մարդիկներին չի ճանաչի  
այնպէս ինչպէս որ են իսկապէս: Թէ այսպիսի մա-  
նուկը չետոյ, երբ նորա կըթուլթուկը կվերջանայ  
և նա կսկսէ կեանք վարել, կսկսէ իւր ունեցած  
հայեացքներէ վերա մարդիկներէ մասին գայ-  
թակղել, նա կստիպվի հասկանալ, որ նորան խա-  
բել են, ներկայացնելով նորան չեղած անձներ,  
նա անդադար կխաբվի իւր ընկերից, թէ միե-  
նոյն ժամանակ մանուկներին ցոյց չտալով մար-  
դիկի իրանց կիբքերով և արատներով, չէ կարելի  
չարի կանոնաւոր գաղափար տալ, և թէ որովհետեւ  
ամեն բան համեմատութեամբ է՝ ճանաչվում, ուստի  
չարն ու բարին առաւել ևս լաւ են որոշվում, երբ  
միաժամանակ են երևում, թէ չարի միջոցով ա-  
ռաւել է որոշվում բարին:

Նախ զուր է կարծելը թէ մանուկը ակտի չկարօ-  
ղանայ ճանաչել մարդիկ իսկապէս, եթէ նոցա  
պատմեն միայն գեղեցիկ յատկութիւններ ունեցող  
անձներէ մասին: Մանուկն, ինչպէս և հասակա-  
ւորները, ասընում է նոյն մարդիկներէ հետ և շատ  
լաւ գիտէ, թէ կան բարի մարդիկ և չար մար-  
դիկ, կան ազնիւ մարդիկ և անազնիւ մարդիկ:

Աթթէ քիչ արատներ է տեսնում նա իւր ըն-  
տանիքում, իւր ընկերներում: Իսկ չարի, մեղքի  
և առաքինութեան ճիշտ գաղափարներ կրօնու-  
սոյցը միշտ կարօղ է կազմել մանուկներէ մէջ  
տասն պատուիրաններ սովորեցնելիս:

գ) Իմ կարծիքով պէտք չէ աւանդել մանուկներին  
(խօսքս 7 մինչև 13—14 տարեկան մանուկներէ  
մասին է միայն) այն դասերը, որոնք միայն մարդ-

կային արատները և պակասութիւնների հետ են ծանօթացնում, այս պատճառներով. 1) Վատ օրինակներն առաւել հակառակ նպատակին են հասնում քան թէ որոնց կցանկային հասնել դաստիարակները, շատ անգամ չարը հրապուրիչ ձևով է երևում. ինչ որ չգիտէ մանուկը, չէ կարօղ և ցանկանալ: 2) Կրօնի դասերում կան այնպիսի պատմածներն ևս, որտեղ արժանաւոր անձների հետ երևում են արատաւոր անձներն ևս (Քամի վարժունքը և Յարէթի և Սեմի վարժունքը), և 3) Երանի թէ ծխական դպրոցներում ժամանակ հասնէր աշակերտներին գիտակցաբար սովորեցնելու քրիստոնէական դրական վարդապետութիւնը և արմատացնելու նոցանում սէր առ բոլորին:

դ) Երբեմն մանուկներին այնպիսի պատմական փաստեր են սովորեցնում, որոնք ոչինչ չարարութիւն չունին մանկական հասակի հետ, օրինակ. Իսահակի կնոջ ընտրութիւն, Յակոբի ամուսնութիւն և այլն: Կրօնի դասերը բացի մանուկներին կրօնի ճշմարտութիւններն հաղորդելուց, ուրիշ նոյնչափ նշանաւոր նպատակ ևս ունին, որ է ներգործել մանուկի կամքի և սրտի վերա, բարոյապէս կրթել նորան: Սակայն համարձակում եմ հարցնել թէ ի՞նչ բարոյական կանոններ և խրատներ կարօղ է քաղել ծխական դպրոցի աշակերտը Իսահակի ամուսնութեան կամ Յակոբի ամուսնութեան պատմածից: Գուցէ այն թէ Իսահակին այնքան հնազանդ էր հօր կամքին, որ առանց դիմադրելու առաւ այն կնոջ, որին բերեց նորան իւր հօր ստրուկը, որին Իսահակն երբէք տեսած չէր,



որի մասին նա ոչինչ չած չէր: Բայց—tempora mutantur et nos illis mutamur—ժամանակը փոխվում է, նորա հետ մենք ևս փոխվում ենք: Հօր կամքին հնազանդութիւնը բոլորովին իրաւացի է, բայց նա ևս սահման պիտի ունենայ:

Այլ մի՞թէ նոր կտակարանում գտնելու չենք առաւել պարտաւորել: օրինակներ: Ինքն Յիսուս հնազանդ էր Յովսէփին, որը մինչև անգամ նորան իսկական հայր չէր: Արդ ո՞վ աւելի արժանաւոր և պարտաւորելի օրինակ է նմանելու—Իսահայիլ թէ Աստուածային Ուսուցիչ Յիսուսը:

Դարձեալ ինչ բարոյական դաս է աւանդվում Յակոբի ամուսնութեան պատմածով, որտեղ պատմվում է թէ Լաբանը խաբեց Յակոբին, թէ Յակոբի սէրն առ Լաբանը այնքան յարաւել էր և անփոփոխ, որ նորա համար Լաբանին 14 տարի ծառայեց: Եւ ինչ գործ ունի 8—10 տարեկան մանուկն որեւիցէ ամուսնութեան հետ: Նա ուրիշ մանկական շրջան ունի, նորան կարելոր են դեռ ևս ուրիշ բարոյական կանոններ, որոնց նա պիտի ընտելանայ մանկութենից: Մի՞թէ մի կրօնուսույց կարօղ է համոզված լինել, թէ այս պատմածներէց կարելի է այնպիսի արդարեւ բարոյական ճշմարտութիւններ հետևեցնել, որոնք չկան Նոր Կտակարանում: Առ հասարակ այսպիսի պատմածներն այնպիսի արտօնութիւններ չունին, իմ կարծիքով, որ մարդի բարոյական կրթութեան համար ամենից առաջ նոցա դիմէինք և ոչ Աւետարանին:

ե) Դասերում աւանդվում են այնպիսի փաստերն,

որոնք մանուկներին երբէք չեն բացատրվում: Օրինակ թլփատութեան ծէսը և Յիսուսի թլփատութիւնը: Սրբազան պատմութեան ուսուցիչը պիտի չխօսէ դասին այնպիսի փաստերի մասին, որոնց պիտի չմեկնէ մանուկներին, ապա թէ ոչ, մանկական Հարցասիրութենից յարուցված խնդրին նա կստիպվի կամ ուղիղ չաւտասխանել կամ այնպիսի խօսքեր ասել, որոնք մեկնելու չեն մանուկին հարցը: Կարծեմ, որ ոչ մի դաստիարակ չի կամենայ մանուկներին սուտ ասել, խարել նոցա, որովհետև սա բոլորովին անվայել գործ է, սակայն մանկական Հարցասիրութիւն թուլացնելն էս, որը ինքն ուսուցիչը յարուցած է, հակամանկավարժական գործ է: Այլև այս տեսակ փաստերը հարկաւոր չէ աւանդել, նորա համար որ ակէտք չէ մանուկներին անորոշ և մութ գաղափարներ տալ որեւիցէ փաստի վերաբերմամբ: Ինչ որ չէ կարելի որեւիցէ պատճառով մեկնել մանուկներին, առաւել լաւ է չլիշել այն: Ապա թէ ոչ, մանուկներին սովորութիւն կդառնայ կիսատ, ընդհատ, մութ տեղեկութիւններով բաւականանալ, իսկ այս սովորութիւնը չափազանց հակամանկավարժական է, ուստի չէ կարօղ ցանկալի լինել:

Մեր դպրոցներում մեծ մասամբ կրօնագիտութիւնը գրեթէ այնպէս է աւանդվում դեռևս, ինչպէս որ աւանդվում էր 30—40 տարի առաջ: Գլխաւորապէս կրօնագիտութեան նիւթը վերցվում է Աստուածաշնչից: Բայց Աստուածաշնչի բովանդակութիւնը բազմատեսակ է: Նա նիւթ է տալիս թէ սրբազան պատմութեանը, թէ վարդապետարա-



նին, թէ աղօթքներին, և թէ եկեղեցական ընթերցմունքին և երգերին: Միևնոյն ժամանակ նորանում կան այնպիսի փաստեր ևս, կան այնպիսի ճշմարտութիւններ, որոնք չեն կարող յատկանալ տարրական դասընթացին և ոչինչ յարաբերութիւն չունին մանուկներին կրօնագիտութիւն աւանդելու նպատակի հետ: Իմ կարծիքով ծխական դպրոցի աշակերտներին համար պրօգրամ գրելիս ի նկատի ունենալու է. 1) այն նպատակին, որով աւանդւումէ կրօնը և 2) մանկական հասակն և նորա բարոյական պէտքեր: Այդ նպատակի նկատմամբ պրօգրամում մուծանելու է. ա) անմիջապէս աստուածային բանով յայտնված դրական վարդապետութիւնը, բ) այն պատմական փաստերը, որոնք մեր հաւատի նիւթ են կազմում, գ) այն իրողութիւններն, որոնք բարոյական կեանքի դասեր են տալիս և դ) Աստուածաշնչի այն պատմածները, որոնք նիւթ դարձած են աղօթքների և եկեղեցական երգերի համար: Մանկական հասակի և նորա բարոյական պէտքերի նկատմամբ պրօգրամում մուծանելու է այն իրողութիւնները միայն, որոնք մանկական կեանքի յարմար բարոյական կանոններ են տալիս: Մանուկներին հաղորդելու է այն միայն ինչ որ ուղղակի նոցա հասակին է վերաբերվում: Ուստի այն փաստերն, որոնք մանուկներին բարոյական դասեր չեն տալիս, որոնք նմանելու պարտաւորութիւն չեն դնում նոցա վերապիտի բաց հանվին մանուկների համար յօրինված պրօգրամից:

Ինչպէս որ ուսանելի նիւթի ընտրութիւնը չէ

Հիմնված միշտ մանկավարժական սկզբունքն Վերա, հիմանադրւս և նոյն նիւթի բաժանումն դասընթացի տարիներն Վերա չէ որոշված միշտ մանկավարժական խորհրդածութեամբ: Կրօնի դաստիարակութեան սխտէմի մասին այսինքն թէ որ տարին ինչ մասն աւանդելու է, մեր մէջ դեռ ևս գրեթէ կանոնաւոր խօսք չէ եղած: Ինչ որ դպրոցում դասախօսվում է, բոլորը պիտի խիստ սխտէմ ունենայ: Մինչև այժմ կրօնը դասախօսվում է յառաջընթաց սխտէմով, այսինքն կրօնուսույցները սկսում են սուրբ գրքի սկզբից և կարգով անընդհատ շարունակում են: Ուստի և պատահում է գրեթէ միշտ այն, ինչ որ ատած էինք Հայկական Աշխարհում 1877 թ.: Այսինքն մի դպրոցում, որտեղ սովորում էին քրիստոնեայ, հրէայ և մահմէտական պատանիներ, հարցրինք մահմէտականից Մահմէդի մասին և տղան ամենամտնրամասնօրէն պատմեց իրանց մարգարէի կեանքը: Յետոյ հարցրինք հրէայից Մովսէսի մասին, նա ևս շատ ճշտութեամբ պատմեց Մովսէս մարգարէի կեանքը: «Այժմ դու պատմիր—ասացինք քրիստոնեայ պատանուն—Յիսուսի կեանքը»:—Մենք այդ դեռ ևս չենք սովորել, պատասխանեց քրիստոնեայ պատանին, մենք Փարիսէի երազներ ենք սովորում:

Վշտալի է տեսնել որ քրիստոնեայ մանուկները գիտեն պատմել Փարաւօնի երազներ և չգիտեն Քրիստոսի ծնունդը:

Սորանից մտաբերելու է, որ մեր դպրոցներում կրօնից աւանդվում է նախ ոչ թէ բուն էականը, այլ ոչ-էականը, ոչ թէ նշանաւորն, այլ աննշանը,



ոչ թէ անհրաժեշտ կարեւորն, այլ քիչ կարեւորը: Այս փաստը շատ պարզ ցոյց է տալիս, որ յարմար չէ յառաջնութեաց սխտէմը, ինչպէս որ գործադրվում է: Բոլոր մեր դպրոցներում, որտեղ արտօնութիւն ունի հին կտակարանը, յառաջագոյն աւանդվում է Բոլոր հին կտակարանը, և միայն յետոյ սկսվում են դասեր նոր կտակարանից:

Մեր կրօնական դպրոցների մէջ ուրիշ պակասութիւն ևս կայ, որ նկատած եմ անձամբ: Կրօնուսուցիչները, հաղորդելով մանուկներին Յիսուսի կեանքից առանձին իրողութիւններ, չեն հոգում միևնոյն ժամանակ Յիսուսի մասին մանուկներին հատուածօրէն հաղորդած տեղեկութիւնները ամփոփել, և ի մի ամբողջացնել: Մեր մանուկները գիտեն Աստուածամարդի կեանքը մաս-մաս և չգիտեն նոյնը պատմել ամբողջապէս, համառոտապէս բոլոր իրողութիւններ Նորա ծննդից մինչև Համբարձումն:

Անվիճելի բան է, որ Յիսուսի կեանքի աջակիս ուսումնասիրութիւնն և գիտութիւնը անբաւարար է քրիստոնեայի համար:

Միւս կողմից պէտք չէ մանուկներին Յիսուսի կեանքի համառօտ ծրագրեր տալ, որը նորա կեանքի իրողութիւնների ցուցակ է դառնում: Պատահած է տեսնել, որ առաջին տարին մանուկներից պահանջած են միայն հետևեալ փաստերի իմացութիւն:

Ո՞վ է մեր Փրկիչ: Ե՞րբ կամեցաւ Նա փրկել մարգեկներին և Լըբ եկաւ սորա համար երկիր: Ո՞ւրից ծնվեցաւ: Ո՞րն դուստր էր սուրբ կոյսն:

Ո՞րտեղ կըթվեցաւ: Ո՞ւմից և երբ իմացաւ Նա Փրկչի ծնունդը իրանից: Ո՞րտեղ ծնվեցաւ Փրկիչը: Ո՞վ առաջինն իմացաւ Նորա մասին: Քանի տարի տեւեց Նորա երկրաւոր կեանքը: Ո՞րտեղ և թնչպէս էր ապրում Նա մինչև իւր մկրտութիւնը: Ո՞վ մկրտեց Նորան և ինչպէս երևեցաւ այդ միջոցին երրորդութիւն: Ո՞րքան աշակերտ ունէր Տէրը: Ի՞նչ էր ուսուցանում Նա և ո՞րտեղ է բովանդակվում Նորա վարդապետութիւնը: Ի՞նչպէս հասկացրեց Նա իւր աշակերտներին իւր աստուածային մեծութիւն (պայծառակերպութիւն): Ի՞նչ հրաշքներ էր գործում: Ո՞վ և թնչպէս մատնեց Նորան: Ի՞նչ սահմանեց Տէրը իւր մահի նախընթաց օրը: Ե՞րբ և թնչպէս չարչարվեցաւ Նա մեզ համար: Ո՞րտեղ թաղվեցաւ: Ե՞րբ և թնչպէս եղաւ Նորա փառաւոր յարութիւնը: Ե՞րբ և թնչպէս համբարձաւ Նա երկինքը: Ե՞րբ և թնչպէս իջեցրեց առաքեալներն վերա սուրբ հոգին: Երբ և թնչպէս պիտի գայ Յիսուս Քրիստոս աշխարհ միւս անգամ: Մանուկներն այս բոլոր հարցերին հետեւեալ պատասխաններ են տալիս:

Մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսն է: Նա կամեցաւ փրկել մարդիկներին և սորա համար աշխարհ եկաւ 5509 տարի աշխարհի ստեղծելուց յետոյ: Նա ծնվեցաւ Մարիամ կոյսից: Սուրբ կոյսն Մարիամ արդար Յովակիմի և Աննայի դուստր էր: Նա մեծացաւ Երուսաղէմի տաճարում: Իրանից Փրկչի ծնվելն իմացաւ Գաբրիէլ հրեշտակապետից: Փրկիչը ծնվեցաւ Բէթղէհէմում: Առաջինն իմացան Նորա ծնվելը Բէթղէհէմի հովիւները:



Փրկիչն ասլըեց աշխարհում մօտ 33 տարի և կէս,  
և այլն:

Հասկանալի է, որ այսպիսի ցուցակագրութիւնն  
իհարկէ Յիսուսի կեանքը իմանալ չէ նշանակում:

Այս անգամ այսքան:

#### Ս. ԵՐԿՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐ:

Ռուսագն կրօնագէտ Ա. Սակալովը բերլիական  
աշխարհագրութեան բաւական յարմար պրօգրամ  
հրատարակեց 1882 թ.: Իս կարծումեմ, որ նոյն  
պրօգրամը նոյնպէս յարմար է մեր ծխական դպ-  
րոցի համար: Բաւական համարելու է, եթէ ծխա-  
կան դպրոցում ուսումնաւարտ աշակերտը հետե-  
ւեալ տեղեկութիւնները ունենայ ս. գրքի աշխար-  
հագրութենից:

Հարց. Աշխարհի ո՞ր մասումն էին կատարվում  
ս. գրքում արտոմած գլխաւոր եղելութիւնները:

Պատասխան. Ս. գրքում պատմած գլխաւոր ե-  
ղելութիւնները կատարվում էին Ասիայում և առա-  
ւելագոյն Պաղեստինէում, որը Ասիայի մի երկիր է:

Հ. Ո՞րտեղ էր գտնվում երկրային դրախտը:

Պ. Երկրային դրախտը, որ կոչվում էր և Նոյն,  
գտնվում էր Ասիայում, Սեաւ Ծովի արևելահարա-  
ւում, այնտեղ, որը վաղ ժամանակ Հայաստան էր  
կոչվում և այժմ ասիական թիւրքիայի մի մասն է:

Հ. Ի՞նչ երկրումն էր ապրում Նոյ:

Պ. Ս. գրքին այդ պարզագոյն չէ ասում, սակայն  
գրեթէ հաստատ է, որ Նոյը ապրում էր երկրային

դըսխտի դրացի երկրում, որը Միջագետք էր կոչվում, իսկ այժմ կոչվում է Ալ—Ջէզիրէ և գտնվում է ասիական Թիւրքիայում:

Հ. Ո՞րտեղ էր գտնվում բարեխօնեան աշտարակը:

Պ. Ս. գիրքն ասում է, որ նա գտնվում էր Սենտար դաշտում, երկրային դըսխտի մօտ, Եփրատի ափերին, որտեղ յետոյ Բաբելոն Հիմնվեցաւ: Այժմ մնում են միայն քանի մի աւերակներ այս երբեմն Հզօր և մեծ քաղաքից:

Հ. Ի՞նչ է քաղաքական երկիրը:

Պ. Քաղաքական երկիրն Ասիայի նահանգ է: Յաւաջագոյն այնտեղ բնակւում էին Նոյեան որդու, Սեմի սերունդները: Նա սահմանակից էր Եգեմին: Այժմ ասիական Թիւրքիայի մի մասն է և կոչվում է Ալ—Ջէզիրէ:

Հ. Քաղաքական երկրի գլխաւոր քաղաքը ո՞րն էր:

Պ. Քաղաքական երկրի գլխաւոր քաղաքն Ուրն էր, որտեղ ծնվեցաւ Աբրահամը և որտեղից գուրս եկաւ նա իւր Հօր Թորրասի և Էղբօրօրդի Ղովտի Հետ, Աստուծու պատուէրի համաձայն, քանանական երկիր գնալու համար:

Հ. Ո՞րտեղ էր քանանական երկիրը և ի՞նչ գանաղան անուններ էր կրում:

Պ. Քանանական երկիրը, որ իւր անունը ստացաւ Քամի որդի Քանանի անունից, Ասիայի հարաւարեւմուտքումն էր գտնվում: Նա կոչվում էր Աւետեաց երկիր, որովհետեւ Աստուած խոստացել էր Աբրահամին, — Իսրայէլեան երկիր, որովհետեւ Յակոբ նահապետն Իսրայէլ էր կոչվում, — Յուդայի երկիր, որովհետեւ Յուդայի ցեղն ամենաբաղմա-



Թիւ էր եբրայական քաղաքում,—Պաղեստինէ, փղշտացիներէ անունով, որոնք քանանական երկրի հարաւարեմտեան կողմումն էին բնակում: Այժմ նա ասիական Թիւրքիայի Ասորիք անունով նահանգի մի մասն է:

Պ. Ի՞նչ զանազան անուններ էր կրում Աստուծու ժողովուրդը:

Պ. Աստուծու ժողովուրդը սկզբնապէս կոչւում էր եբրայական ժողովուրդ: Այս անունը Սեմի սերունդ եբերից ծագեց: Յետոյ նա կոչւում էր Իսրայէլացիներ, Իսրայէլի անունով, որ առեց Հրեշտակը Յակոբին: Վերջապէս, երբ Պաղեստինէն, բարեւոնական գերութեանից յետոյ, Յուդայի անուն ցտացաւ, ժողովուրդն ևս Յուդայի ժողովուրդ էր կոչւում:

Հ. Ո՞ր քաղաքն էր Պաղեստինէի մայրաքաղաք:

Պ. Պաղեստինէի մայրաքաղաքն Երուսաղէմն էր, որը Բենիամինի ցեղի մասն էր: Կարծում են թէ նորան Հիմնել է Բարձրեալ Աստուծու Մելքիսեդեկ քահանան, Աբրահամի ժամանակիցը: Այն ժամանակ նա Սաղէմ էր կոչւում: Յետոյ Երուս կոչւեցաւ, որովհետեւ Երուսացիներ առան նորան, Երուսացիներից առաւ Դաւիթը և իւր թագաւորութեան մայրաքաղաք շինեց. — Երուսաղէմը բռնած ունէր չորս բլուր—Սիօն հարաւից, Ակդա արեւմուտքից, Վէզէփա հիւսիսից և Փօփա արեւելքից: Փօփա (Ամօռական) սարի վերայ, որտեղ Իսահակի զոհաբերութիւն էր կատարւում, Սողոմօնը Հիանալի տաճար կանգնեցրեց: Երուսաղէմի արեւմուտքում գտնւում է Գողգոթայ սարը, որտեղ

խաչվեցաւ մեր Տէր Փրկիչը: Արեւելքում կեդրոն հեղեղատու միւս կողմում գտնվումէ Զիթենի սարը, որի վերա Փրկիչ Յիսուսը իւր վերջին աղօթք մատուց և համբարձաւ երկինք:

Հ. Ի՞նչ ծովերն են յիշատակված ս. գրքում:

Պ. Ս. գրքում յիշատակված են հետեւեալ ծովերը. ա) Միջերկրական ծով, որն այն ժամանակ Մեծ կամ Ներքին ծով էր կոչվում: Նա ոռոգանումէ Պաղեստինէն բոլոր արեւմտեան ափերը: բ) Մեռեալ ծով, կամ Ասիալտեան լիճ, որի մէջ թափվումէ Յորդանանը: Այս ծովը Պաղեստինէն ունի է, Երուսաղէմի հարաւարեւելքում, այնտեղ, ուր գտնվումէին Սօդօմ և Գօմօր քաղաքները: գ) Տերերիական ծով, որը Գէննէսարէթի կամ Գաւիւրիական լիճ է կոչվում: Այս փոքրիկ ծովը Գաւիւրիայի արեւելքումն է գտնվում: Նօրա շրջակայքում Յիսուսը շատ հրաշքներ արեց: Նօրա ափերին բնակւումէին բազմաթիւ ձկնորսներ, որոնց մէջից Յիսուսը իւր առաջին աշակերտներին ընտրեց: Պետրոսին, Անդրէասին, Յակոբին և Յովհաննէսին: դ) Կարմիր ծով, որը Արաբիական ծոց անուն ևս ունի, որովհետեւ ոռոգանումէ ամբողջ արեւելեան Արաբիան:

Հ. Ի՞նչ նշանաւոր գետերն են յիշատակված ս. գրքում:

Պ. Ս. գրքում յիշատակված են հետեւեալ գետերը. ա) Եփրատ, որ իւր սկիզբն առնումէ Հին Հայաստանում, բաժանումէ ասիական Թիւրքիայի արեւելեան մասն հիւսիսից դէպի հարաւ և Պարսկական ծոց է թափվում: Նա անցնումէր Բաբել-



լօծում, բաբելոնական թագաւորութեան մայրաքաղաքում: Բ) Տիգրիս, որ իւր սկիզբն առնումէ Տաւրօսի Հարաւային գառնիւթայրում, բաժանումէ ասիական Քիւրքիայի արեւմտեան մասը և միանումէ Եփրատի Հետ Պարսկական ծոցին չհասած: Նա ոռոգանումէր Ասորեստանի մայրաքաղաք Նինուէ: Տիգրիսի և Եփրատի մէջ տեղ եղած երկիրը Մեծագետք էր կոչվում: Գ) Յորդանան, որը դուրս է գալիս Լիբանանի ստորոտից, կտրումէ Տիքերիական ծովը և թափվումէ Մեռեալ ծով: Յորդանան գետը նշանաւոր է այն հրաշքով, որ արեց Տէրն Իսրայէլացիներին Համար, երբ նոքա Աւետեաց երկիրն էին մտնում: Եղիայ և Եղիսէն ևս ցամաքով անցան Յորդանանում: Յովհաննէս Արարիչը Յիսուսին Յորդանանի ջրում մկրտեց: Դ) Նեղոս, Աֆրիկայի ահագին գետը, ոռոգանումէ Եգիպտոս և քանի մի բերաններով թափվումէ Միջերկրական ծով: Յունիս ամսի սկզբում Նեղոսը դուրս է գալիս ամիերից և ծածկումէ ջրով ստորին Եգիպտոսը: Այս բնական ոռոգումն գերօրինակ արգելնաւորութիւն է տալիս երկրին:

Հ. Ի՞նչ նշանաւոր սարեր են յիշատակվում ս. գրքում:

Պ. Ա. գրքում յիշատակվումեն հետեւեալ սարերը. ա) Արարատ սարը (Մասիս) Ռուսաստանի սահմանագլխին, որի վերա կանգնեց Նոյեան տապանը: Բ) Լիբանանի սարերը, որոնք ընդհատումեն ամբողջ Պաղեստինը հիւսիսից մինչև հարաւ: Հին Ժամանակում Լիբանանի սարերը հռչակված էին իրանց մայրերով: Գ) Թափօր սարը, Տիքերիական ծովի

մօտ, որի վերա կատարվեցաւ Յիսուսի ապօրոհ-  
կերպութիւնը: դ) Կարմեւ սարը, որը հասնում է  
Միջերկրական ծովին: Դեռ այժմ ևս ցոյց են տա-  
լիս այնտեղ այն այրը, որի մէջ ապաստանվեցաւ  
Եղիան, Իսաբէլի հալածանքից խուսափելով: ե)  
Գաղաադի սարերը, Յորդանանի արեւելեան կող-  
մում: Նոքա Գաղաադ են կոչւած, այսինքն վկա-  
յութեան բլուրներ, այն բլրի պատճառով, որ կուտ-  
վեցաւ Յակոբի և Լաբանի ի նշան հաշտութեան  
ձգած քարերից: զ) Նաբաւ սարը (այժմ Ադդար)  
Մեռեալ ծովի մօտ: Մովսէսն այս սարը բարձրա-  
ցաւ, Աւետեաց երկիրը տեսնելու և այնտեղ մե-  
ռաւ: է) Սինայ սարը, Արարիայում, Սին անապա-  
տում: Սինայի վերա Աստուած մարդիկներին  
տուեց իւր օրէնքը Մովսէսի ձեռով:

Հ. Ո՞րտեղ է գտնվում այն անապատը, ուր եր-  
բայեցիներ 40 տարի թափառեցին:

Պ. Այն անապատը, որտեղ երբայեցիները 40  
տարի թափառեցին, գտնվում է Սինայի հարաւում,  
ժայռոտ Արարիայում, որը շրջապատված է Կար-  
միր ծովով:

Հ. Ի՞նչպէս բաժանեցին Աւետեաց երկիրն Իս-  
րայէլացի ցեղերի մէջ:

Պ. Պաղեստինէն բաժանեցին 12 մասների, Յա-  
կոբի 12 զաւակների թուով, այնպէս որ իւրաքան-  
չիւր ցեղը իւր բաժինն ունէր:

Հ. Ի՞նչպէս եղաւ որ Ղևի ցեղը բաժին չստա-  
ցաւ:

Պ. Ղևի ցեղը, որը նուիրված էր տապանակի  
սպասաւորութեանը, համաձայնեց բաժին չունե-



նալ, ուստի 48 քաղաք յատկացրին նորան բնակութեան համար զանազան ցեղերուս:

Հ. Ի՞նչի Աւետեաց երկրի բաժանման միջոցին Յովսէփի ցեղը չէ յիշուի:

Պ. Թէպէտ Յովսէփի անունը չէ յիշված Աւետեաց երկրը բաժանելիս, սակայն նա մոռացված չէր: Առանձին բաժիններ մասնատրվեցան Յովսէփի երկու զաւակներն—Նփրեմի և Մանասէի—սերունդներին, որոնց համարումէին երկու ցեղերի նահապետներ, այնպէս որ Աւետեաց երկիրն այնուամենայնիւ 12 բաժին արին:

Հ. Ո՞րտեղ էր գտնվում Նեփթաղիմի ցեղի բաժինը:

Պ. Նեփթաղիմի ցեղի բաժինը գտնվումէր Պաղեստինէի հիւսիսում և տարածվումէր մինչև Տիրերիական ծովը: Այս բաժնումն էր գտնվում Բեթսայիդա անապատը, որտեղ Յիսուսը 5000 մարդ հինգ հացով և երկու ձկնով կերակրեց:

Հ. Ո՞րտեղ էր գտնվում Ասերի ցեղի բաժինը:

Պ. Ասերի ցեղի բաժինը գտնվումէր Պաղեստինէի հիւսիսում, Նեփթաղիմի ցեղի արեւմուտքում:

Հ. Ո՞րտեղ էր գտնվում Զարուղոնի ցեղի մասն:

Պ. Զարուղոնի ցեղի մասն գտնվումէր Պաղեստինէի հիւսիսարեւմուտքում, Նեփթաղիմի և Ասերի ցեղերի հարաւում և սահմանակից էր արեւմուտքից Մեջերկրական ծովին: Այս բաժնում կային հետեւեալ նշանաւոր քաղաքները. Կանայ, որտեղ Յիսուսն իւր առաջին հրաշք արեց, Նազարէթ, որտեղ անցաւ Յիսուսի մանկութիւն և պատանեկութիւն, բնակելով այստեղ Իւր Մօր և Յով-

սէփի հետ, Եգիպտոսից վերադառնալուց յետոյ:

Հ. Ո՛րտեղ էր գտնվում Իսաքարի ցեղի բաժինը:

Պ. Իսաքարի ցեղի մասն գտնվումէր արևմտեան Պաղեստինէում Զաբուզօնի ցեղի հարաւում, Յորդանան գետի ափերին: Այնտեղ նշանաւոր էր Նալին քաղաքը, Նազարէթի հարաւում  $7\frac{1}{2}$  վերստ հեռու: Թափօր սարից: Այնտեղ Փրկինչն յարոյց այրի կնոջ որդուն:

Հ. Ո՛րտեղ էր գտնվում Մանասէի ցեղի մասն:

Պ. Մանասէի ցեղի մի մասն բաժին ստացաւ Իսաքարի ցեղի մօտ, այնտեղ էր գտնվում Սամարեա քաղաքը, որը Սօղօմօնի մահից յետոյ Իսրայէլեան Թագաւորութեան մայրաքաղաք դարձաւ: Այս ցեղի միւս մասը բաժին ստացաւ արևելեան Պաղեստինէի հիւսիսում և նորան սահմանակից էին արևմուտքից Յորդանանը և Տերերիական ծովը:

Հ. Ո՛րտեղ էին գտնվում Եփրեմի և Դանի ցեղերի բաժինները:

Պ. Եփրեմի և Դանի ցեղերի բաժինները գտնուումէին Պաղեստինէի մէջ տեղ: Եփրեմի ցեղի բաժնում կար Սեւքար քաղաքը, որի մօտ Յակոբի ջրհորի վերա պատահեց Յիսուսի խօսակցութիւնը սամարացի կնոջ հետ: Դանի ցեղի բաժնում կար Յոպպէ (այժմ Եաֆֆա) քաղաքը, Միջերկրական ծովի ափին: Այստեղ Յօնան մարգարէն, Նինուէում քարոզելու փոխանակ, նաւի մէջ մտաւ և գնաց Տարսօն:

Հ. Ո՛րտեղ էր գտնվում Բենիամինի ցեղի բաժինը:

Պ. Բենիամինի ցեղի բաժինը սահմանակից էր



արևմուտքից Դանի ցեղին, իսկ արևելքից Յորդանանին: Այնտեղ նշանաւոր քաղաքներն էին. ա) Գաբաւօն, որի մօտ Յեսու Նաւին արեգակն և լուսին կանգնեցրեց: բ) Երեքով (այժմ Բագ կամ ԲաՀա), Երուսաղէմից 26 վերստ հեռու հիւսիս-արևելքում: Երեքով, որի պատերն ինքնին քանդվեցան, երբ Խորայէլացիները փողերի հնչմամբ և ուխտի տապանակով, Խօթն անգամ նորա շուրջ պտտեցին: Այստեղ էր Յիսուսը Զաքէոսի տանը, այստեղ բացեց Նա կոյրի աչքերը: Երեքովի մօտ երկու սարեր կան. Քառասնօրեայ սար, որի վերա Յիսուսը 40 օր պահեց և Փորձութեան սար, որի վերա բարձրացրեց Նորան սատանան և ցոյց տուեց Նորան բոլոր երկրաւոր թագաւորութիւնները: գ) Էմմաուս, Երուսաղէմից 12 վերստ հեռու: Այստեղ Յիսուսն երևեցաւ իւր երկու աշակերտներին իւր յարութենից յետոյ: դ) Երուսաղէմ:

Հ. Ո՛րտեղ էր Յուդայի ցեղի բաժինը:

Պ. Յուդայի ցեղը բռնած ունէր Մեռեալ ծովի բոլոր արևմտեան ծովեզրը Դանի և Բենիամինի ցեղերի հարաւում: Այս բաժինն 12-ից ընդարձակագոյնն էր, այս արտաճառով վերջը ամբողջ Պաղեստինէն Յուդայ էր կոչվում: Յուդայի ցեղում նշանաւոր է Բէթղէհէմ քաղաքը, Երուսաղէմից 7 վերստ հեռու դէպի հարաւ: Նա կոչվումէր նոյնպէս Դաւթի տուն, որովհետև նորանում ծնվեցաւ Դաւիթ մարգարէ—թագաւորը: Բէթղէհէմում, Միքիէ մարգարէի գուշակութեան համաձայն, ծնվեցաւ Փրկիչը:

Հ. Ո՛րտեղ էր գտնվում Շմաւօնի ցեղի բաժինը:

Պ. Շմաւօնի ցեղը բնակումէք Պաղեստինէի Հա-  
րաւում: Այնտեղ և ոչ մի նշանաւոր քաղաք կար:

Հ. Ո՛րտեղ էին Ռուբէնի և Գադի ցեղերի բա-  
ժինները:

Պ. Այս ցեղերի բաժինները գտնվումէին արեւե-  
լեան Պաղեստինէում, Յորդանանի արեւելքում:

Հ. Ի՞նչպէս բաժանվեցաւ Պաղեստինէն Հրէա-  
ների ղերադարձից յետոյ բարեւոնեան գերու-  
թենից:

Պ. Բարեւոնեան գերութենից Հրէաների ղերա-  
դարձից յետոյ, Պաղեստինէն չորս նահանգի բա-  
ժանվեցաւ. 1) Գալիլիայ — Հիւսիսարեւմտեան Պա-  
ղեստինէում, 2) Սամարիա — միջին արեւմտեան  
Պաղեստինէում, 3) Հրէաստան — Հարաւում, 4) Պէ-  
րէա — արեւելքում:

Հ. Ի՞նչ ազգեր էին շրջապատում Պաղեստինէն:

Պ. Պաղեստինէն շրջապատող ազգերը սոքա էին.  
1) Փղշտացիները: Սոցա երկիրը սահմանակից էր  
արեւմուտքից Միջերկրական ծովին, իսկ արեւելքից  
— Հրէաստանին: Փղշտացիների գլխաւոր քաղաք-  
ներից էր Գազա, որի դռները Սամիսօնը ուներին  
բարձած սարի ղերա տարաւ: 2) Եդօմացիներ —  
Եդօմ անուանված Իսաւի սերունդներ: Եդօմի սե-  
րունդից էր ծագում Հերովդէսն Հրէաստանի թա-  
գաւորը, որի օրով ծնվեցաւ Յիսուսը: Եդօմացիների  
երկիրը գտնվումէր Պաղեստինէի Հարաւում, Ժայ-  
ռոտ Արարիայում: 3) Մադիանացիներ, Մադիանի  
— ԱրրաՀամի և Քետուրի որդու սերունդներ, նոքա  
բնակումէին Մեռեալ ծովի ափերին: 4) Իսմայէ-  
լացիներ, Իսմայէլի — ԱրրաՀամի որդու սերունդ-



ները: Սոքա Մադեանացիները հետ միասին միևեռոյն երկրումն էին բնակում: 5) Մօաբացիներ—Մադեանացիները դրացիներ, Մօաբի—Յովտի որդու սերունդներ:

Հ. Ո՞ր ազգն էր բնակում Պաղեստինէի արևելքում:

Պ. Պաղեստինէի արևելքում բնակում էին Ամօնացիներ, Ամօնի—Յովտի որդու սերունդներ:

Հ. Ի՞նչ լծագաւորութիւն էր գտնւում Պաղեստինէի հիւսիսում:

Պ. Պաղեստինէի հիւսիսում գտնւում էր Ասորի լծագաւորութիւնը, որ բաժանւած էր քանի մի նահանգներ և նոցանից մին Կէլէսերիա էր կոչւում: Մայրաքաղաքը Դամասկոսն էր, որտեղ Պողոսը քրիստոնեայ դարձաւ:

Հ. Ո՞րտեղ էր Տօրիթի սլաւամութեան մէջ լեռնաձագացիների երկիրը:

Պ. Մեդացիների երկիրը—այսօր Իրաք Ալէքսի—Ասորեստանի սահմանակից երկիր էր, արևելքում: Միդիայի մայրաքաղաքը Եկրատանա էր: Գլխաւոր քաղաքներից մին Հռաֆէսն էր, որտեղ ապրում էր Դաբայէլը:

Հ. Ո՞րտեղ էր Պարսկաստան, որը լեռնաձագացիների գերութենից վերադարձի պատմութեան մէջ:

Պ. Հին Պարսկաստանը, որից Կիւրոսն հզօր տէրութիւն ստեղծեց, Ասիայի հարաւ արևմուտքումն էր գտնւում: Պարսկաստանի մայրաքաղաքն էր Սուզա, որտեղ բնակւում էր Արտաշէսը, Եսթերի այլը:

Հ. Ո՛րտեղ էր ս. գրքում յիշատակված Արարատեան թագաւորութիւնը:

Պ. Արարատեան թագաւորութիւնը գտնվումէր Պարսկաստանի Հիւսիսում, Արարատ սարի շրջապատում, և առանձին հայկական տէրութիւն էր կազմում, Մեծն Տիգրանի իշխանութեան ներքոյ, Երեմիայ մարգարէի Հայաստանի թագաւորութիւնը յիշած միջոցին:

Հ. Ո՛րտեղ էր Մակէդոնիա, որ յիշված է Հրէաների գերութենից վերագարձի պատմութեան մէջ:

Պ. Մակէդոնիան գտնվումէր Եվրոպայում, Յունաստանի Հիւսիսում:

---

#### ՖՐԱՆՍԻԱՅԻ ԴՊՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾԱԽՍ:

Ազգային լուսաւորութեան տարեկան ծախսը Ֆրանսիայում, մասնազետական դպրոցներն ևս համարելով, հասնումէ 147 միլիոնին տէրութեան հաշուով, այլև 16 միլիոն նահանգների ծախսեր են 52 միլիոն գաւառների ծախսեր: Ընդամենն 1883 թ. արած ծախսը հասնումէ 214 միլիոնին, բացի արտաքոյ կարգի ծախսերից:

Նապոլէօն I-ի օրով սոյն ծախսը միայն 2,450,000 ֆրանկ էր, Յուլիսի միապետութեան օրով ազգ. լուսաւորութեան վերա ծախսվումէր 13,223,000 ֆր., 1848 թ. հասարակապետութիւնը ծախսումէր 17 միլիոն, երկրորդ կայսերութեան (Նապոլէօն III-ի) օրով ծախսվումէր 23—32 միլիոն:



1871 թ. յետագէժ ազգային ժողովը Հազիւ աւելացրեց ազգային լուսաւորութեան ծախսերի Համար 5 միլիօն: 1876 թ. նորընտիր ազգային ժողովի Հասարակապետական մեծամասնութիւնը աւելացրեց 11 միլիօն: 1881 թ. նոյն ժողովը Հասցրեց ազգ. լուսաւ. ծախսը 106—134 միլիօնին: Իսկ այժմ տարեկան ծախսն է, տէրութեան Հաշուով, 147 միլիօն ֆրանկ:

Հարկաւոր է սորան աւելացնել 500 միլիօնից աւելի, որ ծախսած է տէրութիւնը սկզբնական և միջնակարգ դպրոցների կառուցման և կարգուսարքի Համար:

1878-ից մինչև 1882 թ. աւելի քան 20,000 Համայնքին օգնած է տէրութիւնը դպրոցների կառուցման և նորոգութեան Համար: 3450 արական դպրոց են կառուցած, 3874 իգական դպրոց, 2307 խառն դպրոցներ, 682 մանկանոցներ, 67 բարձրագոյն սկզբնական դպրոց, և 12,220 դպրոցական կարգուսարք են Հոգացել: Սկզբնական դպրոցների ուսուցիչների և ուսուցչուհիների թիւը 100,000 է: Նոյա աշակերտների թիւը մօտ 6,600,000 Հոգի է երկու սեռից:

Մասնաւորապէս Փարիզի սկզբնական ուսման դրութիւնը Հիանալի տեսարան է ներկայացնում:

Միմիայն Փարիզը, մայրաքաղաքների այս մայրաքաղաքը, կամ իշխող հաշիւը, ինչպէս անուանում է նորան իւր մեծ բանաստեղծը, չէ յօժարում թոյլ տալ ոչ մի մայրաքաղաքին իրանից առաջընթաց լինել նոր սերունդներ կատարելագործելու խնդրում: Իւր սկզբնական ուսման Համար Փարիզը ծախ-

սումէք 1816 թ. 52,000 Փր., 1852 թ. 1,604,346 Փրանկ, 1871 թ.—6,513,195 Փր., 1875 թ.—9,761,000 Փր., 1880 թ. — 14,572,641 Փր., իսկ այժմ նա ծախսումէ միայն սկզբնական ուսման համար մօտ 20 միլիօն Փր.: Սա ևս ի հարկէ այն վերջին սահման չէ, որտեղ կանգ պիտի առնէ Փարիզի քաղաքային վարչութիւնը:

1871 թ. Փարիզում կային 94 մանկանոց, 124 արական դպրոց, 123 իգական դպրոց, ընդամենն 341: 1881 թ. կային 134 մանկանոց, 164 արական դպրոց և 177 իգական դպրոց, ընդամենն 474:

Մտնկանոցները պաշտօնավարներին վճարվումէ 1,652,000 Փր. ռոճիկ: 341 դպրոցները պաշտօնավարներին—157 աւագ ուսուցիչներին, 169 աւագ ուսուցչուհիներին, 1067 ուսուցիչներին, 1072 ուսուցչուհիներին, ընդամենն 2465 անձներին վճարվումէ 6,449,700 Փր. ռոճիկ:

Սեփական տուն չունեցող դպրոցները վարձի և դանազան դպրոցական պետօջրները համար, որոնք միշտ ձրի են բաժանվում աշակերտներին, ծախսվումէ 3 միլիօն:

Փարիզի սկզբնական դպրոցները աշակերտները թիւը 103,000 է, բացի 15,000 չափահասներից, որոնց համար յատուկ դասընթացներ կան: Ուրեմն իւրաքանչիւր աշակերտը Փարիզին նստումէ 200 Փր.:

Այլև 340 երգեցօղութեան ուսուցիչներ և 219 նկարչութեան ուսուցիչներ կան գլխաւորապէս տղաները դպրոցներում և 90 երգի և նկարչութեան ուսուցչուհիներ օրիորդական դպրոցներում:

Բացի սորանից 1881 թ. սահմանվեցան պերճա-



խօսութեան (déclamation) և բարձրաձայն ընթերցանութեան նոր դասեր կրկին սեռի աշակերտներին համար:

Այլ 10,000 Փր. ամեն տարի պարգև է բաժանվում այն ուսուցիչներին, որոնք առաւել ջերմեւանդութիւն ցոյց կտան:

Փարիզում դպրոցական հասակ ունեցող մանուկների թիւը 350,000 է, որոնցից 103,000 (երրորդ մասը) միայն յաճախում է քաղաքային դպրոցները: Մնացածներն կամ ազատ են, կամ սովորում են մասնաւոր և հոգեւոր դպրոցներում: Ուրեմն Փարիզը իւր 2,200,000 ներկայ բնակիչներով ծախսում է իւր սկզբնական դպրոցները վերա աւելի քան թէ ամբողջ Գերմանիայում սկզբնական լուսաւորութեան կողմից առաջին համարված Սաքսոնական թագաւորութիւնը իւր 2,600,000 բնակիչներով, աւելի քան թէ Հոլանդական թագաւորութիւնը իւր 3,500,000 բնակիչներով, աւելի քան թէ Բավարիան իւր 5,500,000 բնակիչներով, որը սկզբնական ուսմանը նուիրում է 16,500,000 Փրանկ, և աւելի քան թէ իւր սկզբնական դպրոցներով իրաւամբ պանծացող Բէլժիքը իւր 5,500,000 բնակիչներով, որը սկզբնական ուսման վերա ծախսում է 11,007,689 Փրանկ:

Այս համեմատութիւնները, որ կարող էինք չառնաւելի, ցոյց են տալիս, որ Փարիզը սկզբնական ուսման կողմից, գերազանցում է քան թէ Նիւրսպայի ամենալուսաւորված տէրութիւնները:

Կարճատես խելքը Ֆրանսիայի այս ահագին ծախսերը կարող է չափազանց համարել: Լուսա-

միտ մարդիկ սորա վերա սրտանց ուրախանումեն։  
Սորա մէջ է Ֆրանսիայի ապագայ մեծութիւնը, նորա  
Հասարակապետութեան փրկութիւն և ապահովու-  
թիւնը, քաղաքակրթութեան ապագան։

Մոռանալու չէ, որ Ֆրանսիայի ազգային լուսա-  
ւորութեան այս հսկայաքայլ հրաշալի առաջադի-  
մութիւնը ժ. Ֆէրրիի նախաբանութեան օրով կա-  
տարվեցաւ։

#### ՀՕՄԵՐՈՍԻ ԶԱՒԱԿՆԵՐ։

(Թարգմանութիւն)։

Բանաստեղծի վիճակ դժուար և ծանր է.  
Հաւատումէ նա ամենքին, սիրօղ է,  
Եւ զօհ գոլով միշտ չար երկրիս նենգութեան,  
Փայլերի մէջ ընկած գառին է նման։

Բանաստեղծներս կարծես լինինք մանուկներ,  
Սակայն մարդիկ խորամանկ են... Երբ սարդեր  
Մեզ նենգամիտ որոգայթներ են լարում,  
Իւրաքանչիւր միշտ կեղծումէ և լաբում։

Ով եղբայրներ, է՛մ խորհուրդս կատարենք.  
Ազնիւ մնալով, փակենք աչքերս, ձեւացնենք,  
Թէ չենք տեսնում չար աշխարհիս վատ գործեր,  
Հաւատ ունինք առ բարեկամ և առ սէր։

Չէ որ կօյր էր անմահ Հօմէր, մեր նախնին,  
Մենք ևս լինինք կօյր և պատիւ Հօմէրին։

Իշխան Բաղրատունի։



ԵՎՐՈՊԱՅԻՆԵՐԻ ԴՊՐՈՅԱՎԱՐՈՒԹԻՒՆ:

(Հռչակաւոր մանկավարժ պ. Դիտտէսի դաս ուսուցիչների մասին):

Վէննայում սենեակ վարձեցի Պէտտալօցցի Գասսէ փողոցում, մի բարօնուհու բնակարանում:

Երկրորդ օրը գնացի բազմաՀռչակ մանկավարժ պ. Դիտտէսի բազմաՀռչակ Պէդագոգիում—մանկավարժանոց, որ գտնվումէ Գերմանիայի մեծ իմաստասէրների անունով փողոցներում. առաջից Ֆիլիտէի, մի կողմից Հէգէլի և միւս կողմից Շէլլինգի: Եթէ երկու օր ևս ուշանայի, Պէդագոգիումը Ավստրիայի մայրաքաղաքի միւս բոլոր դպրոցների Հետ արձակված պիտի տեսնէի, ամառնային արձակուրդին:

Երբ մանկավարժանոցի սպասաւորը յայտնեց պ. Դիտտէսին թէ մի Հայ այցելու կամենումէ նորան տեսնել, նա ընդունեց ինձ իւր առանձնասենեակում ընտիր քաղաքավարութեամբ իբրեւ մի Ֆրանսացի: Յայտնեցի իմ ուզ, ումից և ինչ նպատակով ուղարկված լինելս: Պ. Դիտտէսը բարեհաճութեամբ պատասխանեց, որ պատրաստ է ամենայն յօժարութեամբ ինձ օգտաւէտ լինել և Հարկաւոր տեղեկութիւններ Հաղորդել, միայն շատ ցաւումեմ, ասաց, որ վաղիւ պիտի վերջանայ մեր վեցամսեակը և դասերը պիտի դադարեն:

Յետոյ նա ինձ Համառօտապէս ծանօթացրեց Պէդագոգիումի Հետ, շրջեցնելով ինձ եռալարի դպրոցում: Մանկավարժանոցը 3 դասարան ունի:

Աշակերտները մեծ մասամբ Վէննայի ուղղնական դպրոցների ուսուցիչներ են, ուստի և դասերը սովորաբար երեկոյեան են լինում 5-ից մինչև 8 ժամ։ Միայն հինգ շաբաթի օրերը ուսուցիչները կարող են ամբողջ օր մանկավարժանոցին նուիրել, որովհետև այն օր, հին սովորութեամբ, Վէննայի քաղաքային դպրոցներում դասեր չեն լինում։

Ա. դասարանում լինումէ շաբաթական 21 դաս, երկրորդում—22 և երրորդում—18 դաս։

Մէտոդիկը (Methodik)—առարկաներ ուսուցանելու եղանակներ—աւանդւումէ Ա. Բ. և Գ դասարաններում։ Իսկ մանկավարժութիւնը և նորա պատմութիւնը աւանդւումեն միայն Գ. դասարանում, շաբաթական 4 դասով։

Առաջին դասարանում մէտոդիկից (շաբաթական 3 ժամ) անցնումեն, դպրոցավարութեան կամ դպրոցագիտութեան (Schulkunde) գլխաւոր պարագաներ։ Ընթերցանութեան, գրութեան, երգեցողութեան, թուարանութեան և աշխարհագրութեան ուսուցումն։ Մէտոդիկի համար նշանակւած շաբաթական 3 ժամ այսպէս են կարգադրւած։ Վերոյիշւած ամեն առարկաներից աշակերտները կարգով շաբաթական մի փորձնական դաս են տալիս մանկավարժանոցին կից գտնւած դպրոցում։ Շաբաթական երկրորդ ժամը նուիրւումէ փորձնական դասի քննութեանը և ընդհանրապէս մէտոդիկական վեճաբանութիւններին, որոնց արձանագրութիւններն անումեն աշակերտները կարգով։ Երրորդ ժամին աւանդւումէ վերոյիշւած առարկաների մէտոդիկը (ուսուցանելու եղանակը)։



Երկրորդ դասարանում (շաբաթ. 3 ժամ) աւանդ-  
վում է բնական պատմութեան, աշխարհագրու-  
թեան, լեզուների, նկարչութեան և ստեղծական  
պարապմունքի (Formen—arbeiten) մէտօդիկը (ուսու-  
ցումն): Երրորդ դասարանում (շաբաթ. 2 դաս)  
բնագիտութեան և ընդհանուր պատմութեան ու-  
սուցումն: Այլև տեղեկութիւններ նկատողական  
ուսման, օրիորդների ձեռագործութեան, մարմնա-  
մարզութեան, դասազրքերի, դասառնական պի-  
տոյքների և նախագծերի մասին: Իւրաքանչիւր ա-  
շակերտը դարձեալ մի փորձնական դաս է աւան-  
դում:

—Արդեօք կայ տղօր մանկավարժութեան դաս,  
հարցրի ա. Դիտտէսից: Այո, ես դաս ունիմ երրորդ  
դասարանում, և արդէն իսկ ժամ է: Այս անգամ  
սա իմ վերջին դասս է:—Հաճեցէք թոյլ տալ ձեր  
դասին ինձ ներկայ լինելու, ասացի: Սորանով հա-  
մոզվում եմ արդարեւ, որ բաղդաւոր պիտի լինի  
իմ մանկավարժական շրջագայութիւնս, բարե-  
բաղդաւար հանդիպելով գոնէ ձեր վերջին դա-  
սին, թէև ձեր դասերից մենք միշտ օգուտ ենք  
բաղում ձեր երկասիրութիւնների միջոցով:

Մենք մօտենում էինք գ. դասարանին:

—Դուք ի հարկէ գերմաներէն կարդումէք, ա-  
սաց ա. Դիտտէսը: Եւ գ. դասարանի դուռը բա-  
նալով գերմաներէն ասաց. Ja, man hat mir gesagt  
das sie sprechen deutsch.—Ich verstehe besser, als ich  
spreche, ասացի և մտանք դասարան: Պ. Դիտտէսը  
այնուհետեւ շարունակեց գերմաներէն: (Մենք ամ-  
բողջ ժամանակ ֆրանսերէն էինք խօսում, իմ

առաջին խօսքս ֆրանսերէն ասած լինելով): Բայց առանց ուշադրութեան չթողի պ. Իրատէսն առանձին ճարտարութեամբ և քաղաքավարութեամբ ֆրանսերէն խօսակցութիւնը գերմաներէնի դարձնելը, երբ աշակերտներն առաջ պիտի երեւէինք: Սա կարելի է ասել հայրենասիրութեան մի դաս էր: Եվրօպացու ամեն քաջաբիւրն արդարեւ հրահանգիչ է ուսումնասիրողի համար:

Ծանօթացնելով ինձ ուսուցիչ-աշակերտների և ուսուցչուհի-աշակերտուհիների հետ, պ. Իրատէսը ասաց. սոքա են կազմում ավստրիական կայսերութեան բարոյական և մտաւորական հարստութիւնը: Երանի է այն պզգին, որի ուսուցիչները ուրիշներին սովորեցնելու համար, իրանք յօժարումեն սոցա պէս ամեն օր սովորել: Այս անգամ իմ վերջին դասն ևս դարձեալ ուսուցչական պարտօնին կնուիրեմ:

Այնուհետեւ պ. Իրատէսը ինձ աթոռ առաջարկեց և ինքն սկսեց դասախօսել: Յիշատակարանումս ես նշանակումէի պ. Իրատէսի խօսքերը, որքան կարողանումէի: Ահա նորա դասի համառօտութիւն:

«Ամեն մանկավարժներ և ամեն մանկավարժական ձեռնարկներ նկարագրումեն ուսուցչի կամ ուսուցչուհու պատկերը. նոցա բարձր ու վարժը, կեանքի և բնաւորութեան համեստութիւնը, առանձնութեան և ուսման ճաշակը, մանուկների սէրը, գիտութիւն առանց իմաստակութեան, արժանաւորութիւն առանց զաժանութեան, բարութիւն առանց թուլութեան, պարտքի բաւական



գորեղ զգացումն ամենայն խոնջութեանը և ամենայն իշատութեանը չաղթանակելու համար: Բաւական խոսած ենք թէ ուսուցիչն ինչ պիտի իմանայ, ինչ պիտի անէ, ինչ պիտի լինի: Առաւել նշանաւորն և առաւել դժուարն այն է՝ թէ ուսուցիչը ինչպէս պիտի կարօղանայ իրագործել այն, ինչ որ սպասվում է նորանից:

Փոյթ չէ որ սկզբնական ուսուցչի ասպարէզը փայլ չունի, փոյթ չէ որ նորա հոգսերը, և օրերը գրեթէ միշտ քանի մի գիւղերի շրջապատում պիտի սարաւին, բայց և այնպէս նորա աշխատութիւնները հետաքրքիր են ամբողջ հասարակութեան համար և նորա պաշտօնը հասարակական նշանակաւոր պաշտօններէն մին է համարվում: Մեայն գիւղի համար և լոկ տեղական նպատակով չէ, որ օրէնքը պահանջում է, որ բոլոր բնակիչները ձեռք բերեն, եթէ կարելի է, հասարակական կեանքի համար անհրաժեշտ կարևոր տեղեկութիւնները, առանց որոնց միտքը թալկանում է, անզգայանում է և երբեմն վայրենանում է: Սա նոյն ինքն տէրութեան և հասարակական օգտի համար է. որովհետև գործերը բնդհանրապէս լաւ և կենտաջարմար վարելու համար մի ժողովուրդ ոչ միայն առողջ դաստիարակութիւն պիտի ունենայ, այլև լուսաւորված պիտի լինի: Այսուհետև բնդհանուր միջոցնական կրթութիւնը կարգի և հասարակական հաստատութեան գրաւականներէն մին է:

Սորանով է որ սկզբնական ուսուցիչները ազգային լուսաւորութեան խորիսխներ են: Ուսուցիչները իրաւունքներ և պատիւը մեծանալով, նոյա պարտ-

քերն ևս մեծանումեն. շատ քիչ բան կլինէր օրէնքներ յարգելը. հարկաւոր է թափանցիկ նոցա ոգով, ցոյց տալ թէ հասկացվել է նոցա բարոյական իմաստը, թէ ամենայն յօժարութեամբ և սրտանց ընդունվումէ այն կարգը, որի պահպանութիւնը նոցա նպատակն է և թէ իշխանութեան բացակայութեան ժամին ուսուցիչները իրանց իղձմտանքում կգտնէին օրէնքի չափ սուրբ և ազդու իշխանութիւն: Առաջին պարտքը մանուկների վերաբերմամբ է. Հօրը ձեռից ընդունելով մանուկը, ուսուցիչը մի հոգու ծանրութիւն է առնում իւր վերայ: Հայրական իշխանութեան մի մասն ստանալով, նա պարտաւոր է հայրական քնքշութեան և հոգացողութեան ղգացմունք ըստանձնել: Ո՛րքան մեծ է նորա պատասխանատուութիւնը: Նա պատասխանատու է իւր աշակերտների առողջութեան և կեանքի մասին, նոցա լաւ կամ վատ հակամիտութիւնների զարգացման մասին: Նա պարտական է նոցա ուսում տալ, սա մեծ խնդիր է, և կրթել նոցա, սա ևս առաւել մեծ խնդիր է:

Ուսուցիչը պիտի հոգայ մանաւանդ բարոյական կրթութեան մասին: Ուսուցիչը պիտի իմանայ, որ սա է անկասկած նորա առաքելութեան ամենանշանաւոր և ամենազգուար մասը: Նա պիտի իմանայ, որ նորան մանուկ յանձնելով, իւրաքանչիւր ընտանիքը պահանջում է նորանից, վերադարձնել իրան ազնիւ մարդ, իսկ հայրենիքը — բարի քաղաքացի: Գիտէ՞ք, որ առաքինութիւնները միշտ լուսաւորութեան հետ շեն լինում և մանուկների առած դասերը կարօղ են նոցա համար վտանգա-



ւոր լինել, եթէ նոքա միմիայն մտքին ուղղված լինին: Ուրեմն ուսուցիչը թող չխախենայ ծնողական իրաւունքները իւր վերա առնելու մասին, իւր առաջին հոգսերը իւր աշակերտներին հոգու ներքին զարգացմանը նուիրելով: Նա պարտաւոր է զգոյշ լինել իւր դպրոցը աղանդական կամ կուսակցական ոգու առաջ բանալուց, նա պիտի բարձր լինի հասարակութիւն գրաղեցնող ժամանակաւոր վէճերից, իրան ամբողջապէս նուիրելու, տարածելու, հաստատելու բարոյականութեան և առողջ դատողութեան այն չաւիտենական գաղափարները, առանց որոնց համաշխարհային կարգը վտանգին պիտի հանդիպէ, և խոր արմատացնելու երիտասարդ սրտերում առաքինութեան և ազնուութեան սերմերը, որոնց հասակը և կրքերը չկարողանան ամենեւին խեղդել:

Հաւատ առ կենդանի Աստուած, պարտքի սրբութիւնը, հնադանդութիւնն հայրական իշխանութեանը, յարգանք առ օրէնքներ և առ ընդհանուր իրաւունքներ, — սոքա են այն զգացմունքը, որ ուսուցիչը պիտի աշխատէ զարգացնելու: Երբէք իւր խօսքով կամ իւր օրինակով պիտի չսասանեցնէ մանուկներին մէջ այն յարգանքը, որ պիտի ունենան առ բարին, առ ճշմարիտն, առ գեղեցիկն: Երբէք ատելութեան կամ վրէժխնդրութեան բառերով նա պիտի չգրգռէ այս կանխահա՛ս կոյճ կրքերը, որոնք ստեղծումեն, կարելի է ասել, թշնամի ագգեր միւսնոյն ագգի մէջ: Այն խաղաղութիւնը և միարանութիւնը, որ նա կաահաւանէ իւր դպրոցում, պիտի նախապատրաստեն ապա-

գայ սերունդների անդորրութիւնը և միութիւնը։  
Մանուկներից յետոյ ուսուցիչը պարտաւոր ունի առ-  
ծնողները, առ իշխանաւորները։ Յարգելի յարաբերու-  
թիւններ պահպանելով միշտ ծնողներէ հետ, ուսու-  
ցիչն իւր արժանաւորութիւնը կ'ամակախութիւնը  
վտանգին կենթարկէ, եթէ թեթեւութեամբ կսկսէ  
մտերմանալ ընտանիքների հետ։ Ուսուցչական  
պաշտօնից անհամեմատ աւելի փայլուն պաշտօն-  
ներ չատ կան, բայց չկայ աւելի արժանաւոր և  
ոչ աւելի դժուար պաշտօն։ Այս պաշտօնը պահան-  
ջումէ պաշտօնավարից կատարեալ անձնտնտէրու-  
թիւն և անձնուրացութիւն, որոնց համար հաս-  
տատուութիւնը չէ կարող լիութեամբ վարձատրել։  
Վիճակված լինելով տեսնելու իւր կեանքը միատե-  
սակ աշխատութեան մէջ անցնելիս, երբեմն ևս  
հանդիպելու իւր շուրջ տգէտների անարդարութիւն  
կամ ապերախտութիւն, ուսուցիչը կտրմէր շատ  
անգամ և գուցէ կընկճվէր, եթէ իւր ոյժը և իւր  
արիութիւնը անմիջական և գուտ անձնական շա-  
հերից դուրս չորոնէր։ Հարկաւոր է որ իւր աշխա-  
տութիւնների բարոյական արժանիքի խորին դա-  
ցումն պահպանէ նորան և ոգևորէ և մարդիկնե-  
րին ծառայած լինելուց և հասարակական բարօ-  
րութեան գործակցած լինելուց նուաճացած մա-  
քուր գուարճութիւնը դառնայ այն արժանաւոր  
վարձ, որ տալիս է նորան միայն իւր խղճմտանքը։  
Այդ նորա փառք է չափահանել ոչինչ իւր անփայլ  
և աշխատալի դրութենից դուրս, սպառել իւր ոյ-  
ժերը այն գոհաբերութիւններով, որ հազիւ հաշուե-  
են առևուժ նոքր, որոնք նոցանից օգուտ են քաղում,



վերջապէս աշխատել մարդեկներէ համար և իւր վարձը, Աստուծոց ապասելով, մարդկութեան և ազգի առաջադիմութեան գործակից և նպատաւոր լինելն համարել:

Սկզբնական ուսումը պիտի իրադործէ բանականութեան և հասարակական բարոյականութեան զարգացմունքը, որոնք միայն և եթ ապահովացնում են ազգերի անդորրութիւնը և ազատութիւնը... Ուսուցիչներէ ամեն բոլէները լցված են միեւնոյն պարտքով: Ուսուցիչներէ համար կարելի է ասել չկայ մասնաւոր կեանք: Ազգը աւելի է պահանջում քան թէ նոցա հասկացողութեան և գիտութեան հարկը. ազգը նոյնիսկ անձն է պահանջում, ամբողջապէս նոցա անձն, նուիրելով նորան համբերութեան, տոկոսնութեան և անուրիւնութեան իրիստ աշխատութեանը:

Սա բարձր գաղափար է, սա կատարելատիպ (ideal) է. պէտքէ գործ դնել ամեն ճարտարութիւն, ամեն հնար այս կատարելատիպը ուսուցիչներէ հոգու մէջ գետեղելու:

Ով կրթութիւն է տալիս, նա ինքն պիտի ստանաւ մասնագիտական կրթութիւն այսինքն մանկավարժական կրթութիւնը: Մանկավարժութիւնը ուսումնասիրվում է ուսմամբ և գործառնութեամբ. այս կրկնակի արշամանը ոչ մի տեղ այնքան լաւ չէ կատարվում, որքան մանկավարժանոցներում: Ուստի մանկավարժանոցների համար յարմար աշակերտներ ժողովելը ամենամեծ հոգացողութեան կէտերից մին պիտի լինի: Բաւական չէ անընդունակներին և անարժաններին

հեռացնել, հարկաւոր է կոչել ամենարժանաւորներին և ամենաընդունակներին: Մանկավարժանոցներից եռամեայ դասընթացից յետոյ դուրս եկած անձներն բարոյական և իմացական արժէքից կախումն ունին, արդարեւ մեծ մասամբ, դպրոցներն բարեկարգութիւնը, մանուկների բարեկրթութիւնը, կասեմ սկզբնական ուսման գլխից ապագան: Եթէ պէտքէ մի ընկած դպրոց բարձրացնել, մի նոր դպրոց հիմնել դպրոց չեղած տեղը, դպրոցի բարերարութիւններ գնահատել տալ տգիտութեան շնորհով անարդար կամ անտարբեր մնացած ժողովրդին, մանկավարժանոցի ուսուցչացունը բնականաբար նշանակված են այս նուիրական գործերի համար, որտեղ աւելի բարեք կայ անելու քան թէ փառք ժառանգելու, ինչպէս որ պահումեն ընտիր սպանների համար, փառաւոր արտօնութեամբ, ամենաշխատալի բայց ոչ ամենափայլուն պաշտօններ: Պատրաստված լինելով ուսուցանելու, լաւ եղանակներ տարածելու, լաւ օրինակներ տալու, նոքա պիտի նոր սերունդներ կազմակերպեն, վարժեցնելով նոցա անդադար մասնաւոր և հրապարակական առարքինի գործեր կատարելու:

Այս պաշտօնի պահանջներին համապատասխանելու համար, բուսական չէ ուսած լինելը. չեմ դադարի կրկնելուց, որ ուսուցիչ լինելու համար բաւական չէ վկայական ունենալ, այլ պէտքէ մանկավարժական գիտութիւն, իսկ մանկավարժական գիտութիւնը չէ գալիս առանց բնական կոչման: Ասած է. այն են միայն լաւ շինում, ինչ



որ ճաշակով եմ շինում: Այս ճշմարտութիւնը կար-  
ծես յատկապէս ուսուցչական ասպարէզը համար է  
ասված: Թէ սկզբում աշակերտութիւնը և թէ յե-  
տոյ ուսուցչական պարտաւորութիւնները անտա-  
նելի դժուարութիւններ կներկայացնէին, եթէ  
նոցա չընթացնէին սէրը ոչ թէ ընդունած, այլ  
ընտրած պաշտօնի, և զգացումն ոչ թէ դրված,  
այլ որոնած պարտքի:

Ուսուցիչներն և ուսուցչուհիները պիտի ի նկատի  
ունենան որոնելու և գտնելու իրանց աշակերտնե-  
րում ապագայ ուսուցչացուների կոչումն, և հա-  
ղորդէն շրջանական տեսուչներին (մեզանում թե-  
մական վերատեսուչներ), որոնք իրանց շրջագա-  
յութեան միջոցին շնորհալի, աշխատասէր, ազնիւ  
աշակերտներին ի նկատի կունենան, յոնձնարա-  
րելով ուսուցիչներին զարգացնել նոցա մէջ ուսուց-  
չական կոչման ձգտումն: Սա մի տեսակ նուերա-  
գործութիւն է բարձր մանկավարժական և բարոյա-  
կան կրթութեան համար, որ կտրօղ են ստանալ  
այն աշակերտները մի օր մանկավարժանոցում, և  
միւս կողմից մի բարեհաճ շարունակ առանձին  
վերահսկողութիւն է նոցա յառաջադիւմութեանը:

Երկտասարդներ և երկտասարդուհիներ դուրս  
գալով մանկավարժանոցներէն բոլորովին կտալ-  
վէին, եթէ մտածէին թէ մի դպրոցում կարգված  
լինելով, վկայական անգամ ունենալով, նոքա այլ  
ևս ոչինչ չունին սովորելու: Ուրիշներին ուսուցա-  
նելիս, կրկնումեմ, միշտ պէտք կայ ինքնին սովո-  
րելու: Պէտք է Սօլօնի պէս կարօղանալ ասել. Սո-  
վորելով ես ծերացայ: Մարդս միշտ աղքատանում է նո-

ընդունել ինչ որ ձեռք չէ բերում: Այլև բաւական չէ սկզբնական դպրոցին վերաբերեալը միայն իմանալ. հարկաւոր է այնքան զարգացումն ունենալ, որ կարողանան առաւել բարձր խնդիրներով զբաղել. սորանով են ճանաչվում լուսաւորված խելքերը: Շատ յարմար ասած է մի գիտնական թէ պէտք է թեւատարած լինել ամեն բանի վերա ինչ որ անումես: Պէտքէ շատ աւելի իմանալ, թէ վերելից, թէ ստորից, մի կողմից, ամեն կողմերից, պարփակել իւր առարկան և նորա տէր դառնալ:

Ուսուցիչներն իրանց ուսումն լրացնելու և ընդարձակելու երեք միջոց ունին. ընթերցանութիւն, դասերի պատրաստութիւն և մանկավարժական ժողովներ:

Ընթերցանութեան մասին շատ անգամ խօսված է: Գրասերի պատրաստութիւնը ամենակարեւոր խնդիր է: Այն ուսուցիչն, ով գալիս է իւր աշակերտներին մօտ առանց յառաջագոյն ընտրելու և մշակելու դասերի առարկան, ով անբարեխղճաբար է վարվում դասերի հետ, ով յոյս է դնում իւր գրքին, արժանի չէ ուսուցչի անունին: Պատրաստութիւնը դասերի ընտրութիւն չէ միայն, այլ ընթերցանութիւն այն ամեն յօդուածների, որոնք վերաբերվումեն ուսուցմանը, դասը հետաքրքիր, օգտաւէտ, նպատակաշարմար անելու համար: Ուսուցիչը իւր ամեն գիտեցածը պիտի չասէ, որ և չափազանց շատ կլինէր, բայց իւր շատ իմացածը կնպաստէ նորան առաւել լաւ հասկանալու, առաւել լաւ կարգաւորելու և յայտնելու ինչ որ պիտի հազորդէ աշակերտներին, ճշտութեամբ պատաս-



խանելու անակնկալ հարցմունքին, պէտէտութիւն,  
ոգևորութիւն և կեանք մուծանելու ամբողջ ու-  
սուցման մէջ: Սորանից նա նոյնչափ օգուտ ունի,  
որքան իւր աշակերտները, որովհետև ամենօրեայ  
աշխատութեան կայծը կբորբոքվի ամեն օր նոր  
շանքից: Ով որ գանգատումէ իւր պաշտօնի միա-  
տեսակութենից, նա ինքնին միզադրվումէ: Խելքը  
երկաթի պէս է. չգործադրված երկաթը ժանգոտ-  
վումէ, բայց որքան նորան գործ են դնում, այն-  
քան նա փայլումէ և այնքան աւելի կամենումեն  
նորան գործածել:

Մանկավարժական ժողովներ առաջ ևս կային,  
բայց իբրև կարևորագոյն միջոց նորերումս նուի-  
րագործվեցան: Թէ ուսուցիչներ և թէ ուսուցչու-  
հիներ օգուտ պիտի քաղեն թէ գաւառական և  
թէ նահանգական ժողովներից: Ժողովներն փոր-  
ձեր եղան և շատ չաջողութիւն ունեցան: Բացի  
զուտ մանկավարժական օգտից, այս ժողովները  
այն օգուտն ևս ունին, որ ամրացնումեն մի մար-  
մին կազմելու ոգին, աւելի արմատացնումեն դըպ-  
րոցական գերդաստանի զգացմունքը և մտքերը  
հեռաւոր քաղաքներում, գիւղերում և խորշերում  
աշխատողների մէջ, որոնցից իւրաքանչիւրն առան-  
ձին տարածումէ վեհանձնութեան, ազատութեան  
և ազգասիրութեան ոգի:

Ուրեմն ուսուցիչներին կասենք. Սշխատեցէք:  
Ահա առաջին խորհուրդ: Սյլև կասենք նոյա. Սի-  
րեցէք ձեր պաշտօնը: Եթէ դուք նորան չէք սի-  
րում, լաւ չէք արել որ ընտրել էք նորան: Իւր  
պաշտօնը սիրելը ուղիղ հոգու և սգնիւ սրտի նշան

է: Երբ որ մին սիրումէ իւր պաշտօնը, ուրեմն Հասկանումէ նորան, արժանաւորութեամբ է վարում և չէ ստորացնում նորան ոչ իւր իմացական և ոչ բարոյական պակասաւորութեամբ, և ոչ ինքնահաւանութեամբ: Ինքնահաւանութիւնը չեմ ասում ներելի, այլ Հասկանալի է, երբ բոլոր շուրջ գովեստներ են լսվում սկզբնական ուսուցիչներին: Երկար ժամանակ ամեն կողմից անուշադիր, շատեմ արհամարհված, մնալով, լետոյ յոնկարձ գնահատվելով իշխանութենից, յարգվելով, գրեթէ փաշտալվելով Հասարակութենից, լսելով անդադար և ամենուտ թէ այն մութ պաշտօնը, որ վարումէ ուսուցիչը խաւարալին գիւղի անկիւնում, Հասարակական ամենաբարձր պաշտօններից մին է, — մթթէ այս բոլորը չէ կարող շացնել ամենահաստատուն աչքերը, ման բերել ամենաճանր գլուխը կամ հրապուրել ուսուցչին փոքր ինչ աւելի իւր անձի քան թէ իւր պաշտօնի մասին դբադելու: Այնքան հեշտ չէ Համեստարար մտածել իւր մասին, երբ իւր պաշտօնի մասին խրոխտաբար պիտի մտածեն:

Դպրոցը չէգոր մի երկիր է, որտեղ հանդիպում են ամեն ընտանիքների մանուկները: Որպիսին լինին ծնողների քաղաքական կամ կրօնական կարծիքները, մանուկները հաւասար իրաւունք ունին ուսում առնելու, որովհետև առանց ուսման հաւասարութիւնը — ազատութեան քոյրը — անհնարին է: Ո՞ր իւր երկիրը սիրող անձն չէ ցանկանում իւր հայրենիքը, տեսնել միշտ միացած, մի հողի, մի սիրտ եղած, որն բոլոր բարախմունքը լինէին հայ-



ընելքի մեծութեան, փառքի և երջանկութեան համար: Սա է ճշմարիտ հաւասարութիւնը, որովհետեւ սա է գաղափարական արդարութիւն:

Դպրոցը չէ և պիտի չլինի ոչ եկեղեցի, ոչ տեան, ոչ թատրոն. պէտք է որ դպրոցը լինի դըպրոց և աւելի ոչինչ: Այն ուսուցիչը, որ դառնում է մի կուսակցութեան մարդ, մասնաւոր անձներէ երանոտապարտ, տեղական իշխանաւորներէ հնազանդ գործակից կամ չափազանց մտերեմ, շատ շուտ կ'իորոցնէ ժողովուրդի աչքում իւր իսկական բնաւորութիւնը և մասամբ իւր բարոյական հեղինակութիւնը:

Այսպէս չէ կարելի լաւ քաղաքացուն վայել գործ կատարել: Այլ իւր օրինակով աւելի քան թէ իւր կանոններով նա թող հաղորդէ մատաղ սերունդներին աշխատասէր և բարոյական սովորութիւններ, թող ուսուցանէ յարգել օրէնքը և սահմանադրութիւնը, սիրել հայրենիքը ամեն բանից վեր: Նա թող սովորեցնէ նոյա ժամանակի գնահատութիւնը և աշխատութեան գնահատութիւնը, որը կեանքի գրեթէ ամբողջ գիտութիւն է, որովհետեւ այս է կանոնաւոր գործելու և իւր անձն լաւ կառավարելու գիտութիւնը, և այնուհետեւ նա իւր սլաքաբեր կատարած կ'լինի, և քաղաքական գործ գործած կ'լինի այն միակ եղանակով, որ յարմար է իւր բնաւորութեանը և իւր պաշտօնին: Այս մտքով հասկանալու է գիտնականի խորիմաստ խօսքը թէ «նա, ով ուսուցանում է մատաղ սերունդին, թաղաւորական մարդ է»: Ուսուցչուհու մասին չեմ ասի այս մտքով ևս թէ նա «թագա-

ւորական մարդ» է: Այլ կտօնծ, որ նա համահա-  
ւասար պաշտօն է կատարուծ, և նոյնպէս գործակ-  
ցումէ տէրութեան բարօրութեանը, կրթելով օ-  
րերըդներին այնպիսի զգացմունքով, որով նոքա  
մը օր հայրենանուէր մայրեր և ազնիւ տանտի-  
կիներ կլինին:

Այս են ահա իսկապէս երկօքեան սեռի մանուկ-  
ներին կրթելու համար ազատամիտ, ազգային,  
հայրենասիրական և իմաստուն սկզբունքը:

---

### ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Հայկական ազգի ցանկութիւնը կատարվեցաւ.  
Ներսէս պատրիարքը Կաթողիկոսացու ընտրվեցաւ:

Հայկական ազգն իւր ամենովթանկապին ժա-  
ռանգութիւնը—Ս. Էջմիածինը և Կաթողիկոսու-  
թիւնը—մինչև այսօր սրահալնամ է ոչ հազարա-  
ւոր, այլ իւր բիւրաւոր և միլիօնաւոր զաւակների  
սրբւնով: Մի տարի և կէս անդադար բարբառող  
Հայերի գոչն ու աղաղակը իրանց անձկակարօտ  
հնչմամբ հասան Հայկական ազգն և եկեղեցին նա-  
խաինամօղ Բարձրեալ Աստուծու մինչև իսկ պա-  
տուանգանը և Նորա ցուցմամբ, Հայերի բարոյա-  
կան փրկութեան Սրբաւայրուծ, Միածնի իջման  
տեղում, մայրի Գ-ին, Ներսէս պատրիարքն ընտ-  
րվեցաւ ի գահ հայրապետական, Հայոց կրօնի,  
եկեղեցու և դպրոցի պետ և ծաւրագոյն տնօրէն  
լինելու:

Այս սքանչելի ընտրութիւնն ուրախացրեց տըրտ-



մածներին, միևթարեց վշտացածներին, հոգիացրեց  
ամենքին:

Եւ ամենայն լուսամբիս հայերը ուխտած են և  
պտտրատտ են միմիանց աջակից և գործակից լինել  
ցանկալի Ներսէս Կոթողեկոսացուի Հայրապետու-  
թեան փառքին յօգուտ ազգի և եկեղեցու:

„New-Yorker Belletristische Journal“ լրագիրը հաղոր-  
դում է, որ մօտերումս Ամէրիկայի Վիսկոնսին նու-  
հանգի Վարօնատ քաղաքում, տեղական ճեմա-  
րանի չորս աշակերտ կամեցան մի ագարակատէ-  
րին կառակել. ծղիւնիներից հանեցին նորա դըռ-  
ները և այրեցին: Երբ այս իմացաւ վերատեսուչը,  
աշակերտներին առաջարկեց բնարել—կամ ճեմա-  
րանից արձակվել, կամ դատաւորից նշանակելի  
պատժին ենթարկվել: Աշակերտներն ընտրեցին  
վերջին պայմանը, և դատաւորը վճռեց, որ նոքա  
չորս սաժէն փալտ կոտորեն անտառում և իրանց  
վերա բարձած բերեն նոյն տեղի մի այրի կնոջ  
տուն: Պատիժն առաւել ազդու և զգալի տնելու  
համար տեղական երաժշտախումբը հրաւիրված  
էր նուագելու քաղաքային հրապարակում, ժողո-  
վուրդը հաւաքելու նպատակով: Աշակերտները  
կրօնմէին փալտ հարիւրաւոր տիանտատեսների ներ-  
կայութեամբ:

Փարիզի դպրոցներում 1880 թուից մուծել են  
զինուորական կրթութիւններ: Քաղաքային վար-  
չութեան մէջ տաւանձին յանձնաժողով է կազ-  
մված այս պատանի զօրքի կազմակերպութեան և

առաջագիմութեան մասին հոգալու: 11—13 տարեկան մանուկներ ունին յատկապէս նոցա համար շինված մի հրացան, մի սուր կապարանով, միաձև բաձկոն, վարտիկ և գլխարկ: Բոլոր աշակերտները բաժանված են դուռների, իւրաքանչիւր դուռը 600 աշակերտից, որոնք չորս մասներէ են բաժանված: Զինուորական վարժութիւնները լինում են ամեն հինգ շաբաթի օրեր, իսկ արտերադասական շարժողութիւններ և վարժութիւններ ամեն ամսն առաջին չորեքշաբաթի օրերը:

Ամէրիկայի Միսսուրի նահանգի դատաւոր պ. Կրէկէլը այս օրերս հետաքրքիր և ուշադրութեամբ արժանի մի վճիռ կապեց: Թեթև մի յանցանք գործած էին երկու անձներ, որոնցից մին լիոք ինչ գրագէտ էր, միւսը բոլորովին անգրագէտ: Անգրագէտը դատապարտվեցաւ բանտում մնալու մինչև որ կսովորէ կարդալ և գրել, իսկ գրագէտը նոյնտեղ մնալու մինչև որ կսովորեցնէ առաջինին կարդալ և գրել: Առաջագիմութիւնը տղիքան տրաք էր, որ երեք եօթնեակում առաջինը սովորեց կարդալ և գրել և երկօրեան ևս ազատութիւն ստացան: (Freie Paedagogischeblätter von Wien):

Մենք արեւն ասացինք, որ դպրոցում անհրաժեշտ կարևոր է աշակերտներին տրամաբանօրէն և իմաստնաբար գրելսովորեցնել: Ներկայումս Ժնէվում սովոյ. կիսամսեայ L'Éducateur (Դաստիարակ) թերթը իւր հրատարակվելու օրից չէ դադարել շարադրելու դժուար խնդրին առանձին ուշք դարձ-



ներուց: Այժմ այս է գրում. «Յայտնի է որ գտնա-  
դան եղանակներ կան տարրական դպրոցում շա-  
րաքերի սոյորեցներու համար: Նախ սկսում են ի-  
րախօսութեան քսով այն առարկաների մասին,  
որոնք գտնվում են դասարանում, օրինակ գրա-  
տարանի, դուռն, յուսամուտ և այլն: Աշակերտ-  
ներին գտնել են տալիս նոցա ձեռք, չափը, գոյնը,  
գործադրութիւնը, ճիշտ և քարզ հարցերի միջնոր-  
դութեամբ: Յետոյ գրել են տալիս աշակերտներին  
ինչ որ նոքա դիտել են:

Ուրիշ եղանակ. կարդալու է երկու կամ երեք  
անգամ մանրալիւ, նկարագրութիւն, պատմած,  
կարճ խօսակցութիւն և լետոյ գրել տալու է ա-  
շակերտներին իրանց լսածը: Երրորդ եղանակով  
աշակերտներին շարագրել են տալիս նախադա-  
սութիւններ և խօսքեր կազմելու միջնորդու-  
թեամբ, ինչպէս որ անում է հայր ժիրաբը իւր մալ-  
րենի լեզուի ձեռնարկում: Զորրորդ եղանակն այն  
է, որ ուսուցիչն աշակերտին օգնում է ժողովելու  
շարագրելի առարկայի հետ կապված և կարեւոր  
մտքերը: Այս եղանակը մօտ է իրախօսութեան:

Լիւտերի չորս հարիւրամետիլը սօնելիս անցեալ  
տարի Բէռլինի մանկավարժանոցի վերատեսուչ պ.  
Շուլցէ (Schultze) ճառ խօսեց ի պատիւ Լիւտերի  
նոյն քաղաքի ուսուցիչներին առաջ: Իւր ճառը նա  
այս խօսքերով վերջացրեց. «Հարկաւոր է որ դըւ-  
րոցը, զարգացումն աւանդելով ժողովրդին սերուն-  
դից սերունդ, շարունակէ Լիւտերից գծագրված ճա-  
նապարհով գնալ: Վրայ քրիստոնէութիւն առանց  
զիտութեան, և վրայ գիտութիւն առանց քրիստո-  
նէութեան: Արովհետեւ մին առանց միւսի տանում է  
դէպի բարբարոսութիւն կամ հեթանոսութիւն:

Վերմաներէն հրատարակիչը Rheinisch—Westfa-

lische Schulzeitung (Քէյնական —Վէստֆալեան դպրոցական լրագիրը) վաւերական համարելով, մի օտարօտի պաշտօնական տեղեկագիր է հրատարակած, որ պարունակում է 12 հարցմունք, ուղղած Պրուսիայի մի նահանգի դպրոցական մասնաժողովներին նահանգական վարչութեան կողմից: Ահա թարգմանութիւնը.

1. Ի՞նչ դպրոցական ամսագիր է կարգում ու սուցիչը:

2. Նորա հետ ուրիշ հոլքեր են ստորագրած նոյն ամսագրին:

3. Ուրիշ ի՞նչ ընթերցանութեամբ է պարապում:

4. Ունի նա արդե՞ք ընչացք:

5. Ի՞նչպէս է հագնւում:

6. Յաճախում է արդե՞ք պանդոկ:— Ի՞նչ պանդոկներ:

7. Պատկանում է արդե՞ք ընկերութիւններին:— Ի՞նչ ընկերութիւններին:

8. Ի՞նչ մարդիկներին է քուէ տալիս ընտրութիւնների միջոցին:

9. Յաճախում է արդե՞ք մշտապէս եկեղեցի:

10. Խաղում է արդե՞ք բիւիարդ կիւրակէ օրեր:

11. Ներկայ դանվում է արդե՞ք քարոզչական ժողովներին և ուրիշ կրօնական տօներին:

12. Գարեջուր է խմում արդե՞ք թէ՛ օղի:

Այս տեղեկագրի ստիժով Stargardter Zeitung հետեւալ դատօյութիւն է անում. «Այս տեղեկագրի հեղինակը չէ կարօղ արդե՞ք յետագայ ձեռով քանի մի հարցմունք ևս աւելացնել.

1. Շարաթը քանի անգամ տէրութեան սուամ ռոճկով ուսուցիչը կարօղ է ուտել, քաղցած լինելով:

2. Ի՞նչ կերպով կարօղ է նա, մեռնելու դէպքում, իւր ընտանիքի սպաքան ապահովացնել:

3. Կարօղ է արդե՞ք, իւր ստացած ռոճկով, իւր զաւակներին վայելուչ ուսում տալ:



4. Պատահած է արդեօք իրան, իւր բոլոր գոյութեան միջոցում, մի բաժակ գինի ունենալ ճաշին: Եւ այլն:

Որովհետեւ շատերը պահանջեցին Բէլնական դպրոցական լրագրից յօդուածի ճիշտ ծագումն յայտնել, նա քանի մի օրերից յետոյ պատասխանեց, որ տեղեկագիրը սլոնական չէր, այլ թէ նա Լիպպէի իշխանութեան մէջ է գործադրվում: Բէլ-լինի Kreuz Zeitung լրագիրը վկայումէ իւր կողմից թէ Լիպպէի իշխանութեան մէջ ոչ կայ և ոչ երբէք գոյութիւն է ունեցել այս տեսակ տեղեկագիրը: Պէտքէ կարծել ուրեմն որ սա կեղծ բան է:

Գերմանիայի մանկավարժանոցները ուսուցչներին եօթներորդ ժողովը (7 deutscher Seminarlehrertag), որ գումարվեցաւ Հանսլորում տոնցաւ սեպտեմբերի 25, 26 և 27-ին, հետեւեալ խնդիրները քննադատեց.

1. Մանկավարժանոցի ուսման մասնագիտական բնուորութիւն:

2. Ի՞նչպէս և ի՞նչ չափով մանկավարժանոցը կարօղ է նպաստել ոչնչացնելու օտար բաւերի ներմուծութիւն գերմանական լեզուի մէջ:

3. Ի՞նչ կարօղ է անել մանկավարժանոցը օգնելու երիտասարդ ուսուցչին, պաշտօն ըստանձնելուց յետոյ, իւր մանկավարժական տեղեկութիւնները և ընդունակութիւնները զարգացնելու և լրացնելու համար:

Փարիզի Le Témoignage (վկայութիւն) շաբաթաթերթը ասումէ, որ Ամէրիկայի Միացեալ Նահանգներում կան 86,000 կիւրակեան դպրոցներ, ուր յաճախումեն 5 միլիօն մանուկներ:

Շնորհակալութեամբ ստացանք իւր ժամանակին փոխանակաբար Աղբիւրը, Վարժարանը, Առողջապահական Թերթը, Արարատը և Երևանի Յայտարարութիւնները: Պարբերութեք փոխանակելու սովորութիւնը լիեցեցումենք այն խմբագրութիւններին, որոնք զեռևս չեն բարեհաճել ուղարկել Մանրավարժանոցի խմբագրութեանն իրանց թերթերը փոխանակաբար:

Խմբագրութիւնս ստացաւ Միւլթար Գօշի Դատատանադիրը Հայոց Հանգուցեալ Վահան Տ. Վարդ. Բաստամեանի իրաւաբանական հետազօտութիւնը: Հանգուցեալ վարդապետի այս երկասիրութիւնը հարուստ ընծայ է հայ օրէնագէտներին և հայ աղքատ իրաւագիտական գրականութեանը: Տպւած է ԼՂժիւծնի տպարանում, գէնը 3 ման. է նշանակւած, շատ թանկ:

Ստացանք Մ. Հ. Ո. Գ. Ը. հրատարակած Զորս առակ: Գ. Ը. մաղթումենք յաջողութիւն: Միւնոյն ժամանակ կցանկայինք, որ աշխատողները լեզուի մաքրութեանը և միութեանն առաւել ուշք դարձնէին: Թող մանուկները մաքուր հայերէն կարդան և սովորեն: Երբեմն գործ է անված եւս, երբեմն էլ (Եր. 12, 21: Ի՞նչի միշտ եւս չգործածենք: Առաւել օգտաւէտ չէր լինի արդեօք, որ մանուկը էգույ բառի փոխանակ փողի կարդար և սովորէր: Զա՞յիլ (Եր. 20) շատ գռեհիկական բառ է, և այլն: Զորս առակը սիրուն տպւած է Մօսկվայում և հեշտ կարգւում է: Գլնը 15 կօպ. է:

Խմբագրող-հրատարակող ԽՈՒԷՆ Մ. ՎԱՐԴ. ՍՏԵՓԱՆԷ:

Дозволено ценз. Тифлисъ, 8 Юня 1884 г.

Типографія П. Мартиросіана, Орб. ул. д. № 5.



## ԻՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ:

Երևան, Իգնատիոս: Ստացանք: Կհրատա-  
րակվի: Շարունակեցէք: Մանկավարժանոցը առաւել  
ընդարձակ է քան թէ Հայկական Սշխարհն էր, թէև  
առաւել փոքրազիւր է: Դուք չէք մոռանում էջ-  
միածին, էջմիածինն ևս առաւել յիշումէ ձեզ:

---

## „ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ“

Պատկերազարդ հրատարակութիւն ամիսը  
երկու անգամ:

Տարեկան գինը 4 ռուբլի:

Հրատարակում է Պօլսում. ստորագրուել  
կարելի է Վարժարան ամսագրի խմբագրատանը:

---

## ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

(Սերգեյեւիսիւն փողոց տ. Միրզոյեաններէ) բաց  
է ամեն օր առաւօտեան 9 ժամից մինչև երե-  
կոյեան 8 ժամը:

Գրադարան—Ընթերցարանը լիքն է և պար-  
բերաբար ստանում է գրքեր հէնց նրանց լոյս  
տեսնելու օրից: Ստանում է և մանկական ու  
պատանեկական հասակի յարմար պարբերական  
հրատարակութիւններ գանազան լեզուներով:

Մանկավարժանոց ամսագիրը հրատարակվում է 1884 թ. յունվար ամսից, գլխավորապես մանկավարժական ուղղութեամբ: Ամսական տետրն երկու թերթից է, տարին կլինի 10 տետր (յուլիս և օգոստոս ամիսներում չի հրատարակվել):

Մանկավարժանոցի տարեկան գինն է 3 մանէթ:

Հրաւիրվում են մտածող, դպրոցանուէր հայացն ուսուցիչներն աջակցելու Մանկավարժանոցին իրանց բաժանորդագրութեամբ և աշխատակցութեամբ: Ստորագրւողները յատկապէս պիտի գիտեն այս հասցէով. Св. Эчмιάдинъ. Редакціи Маннаваржаноуъ.

Խմբագրող-հրատարակող ԽՈՐԷՆ Մ. ՎԱՐԴ. ՍՏԵՓԱՆԵ՛Ն:

Համակերօնական Պրօգրամներ (առաջին փորձ) աշակերտական կանոններով և դաստիարակների հրահանգներով հայկական հոգևոր ծխական և միջնակարգ դպրոցների համար վաճառվում են Թիֆլիսում Կենդրոնական գրալաճառանոցում (Центральный Книжный магазинъ) և Զաք. Իրիգորեանի Կովկասեան Գրալաճառանոցում (Кавказская Книжная торговля З. Грикурова): Իւրրորդի գինն է 50 կ.: Մանկավարժանոցի բաժանորդները ստանում են պրօգրամների գրքոյկն ամսագրի յունվարի և փետրվարի տետրների փոխարէն:

Մեզ խնդրում են ծանուցանել հետևեալը. «Արքերմանի հայկական հոգևոր դպրոցի ուսուցիչ Թ. Պալեանը կազմում է թուարանութեան ձեռնարկ ծխական և միջնակարգ դպրոցների ուսուցիչներին համար, փոխադրութեամբ, Եվսուշէ՛վսկու մեատօղով և շուտով պատրաստ կլինի տպագրութեան համար»:

